ՀՀ ԿԳ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

«ԳՅՈՒՄՐՈՒ Մ. ՆԱԼԲԱՆԴՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ» ՊՈԱԿ

# 2014 ԹՎԱԿԱՆԻ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ

# Հ Ա Շ Վ Ե Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

ԳՊՄԻ ՌԵԿՏՈՐ, ՊՐՈՖԵՍՈՐ Վ.Ֆ.ԳՐԻԳՈՐՅԱՆ



# Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ ՈՒ Թ Յ ՈՒ Ն


ՆԱԽԱԲԱՆ

I. ԿՐԹԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ

II. ՈՒՍԱՆՈՂՆԵՐ

III. ՊՐՈՖԵՍՈՐԱԴԱՍԱԽՈՍԱԿԱՆ ԵՎ ՈՒՍՈՒՄՆԱՕԺԱՆԴԱԿ ԿԱԶՄ

IV. ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԶԱՐԳԱՑՈՒՄ

V. ԱՐՏԱՔԻՆ ԿԱՊԵՐ ԵՎ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ

VI. ՀԱՍԱՐԱԿԱՅՆՈՒԹՅԱՆ ՀԵՏ ԿԱՊԵՐ ԵՎ ԼՐԱՏՎՈՒԹՅՈՒՆ

VII. ԳԻՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ

VIII. ՈՐԱԿԻ ՆԵՐՔԻՆ ԱՊԱՀՈՎՈՒՄ

IX. ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Գյումրու Մ. Նալբանդյանի անվան պետական մանկավարժական ինստիտուտը, հավատարիմ մնալով իր առաքելությանը, իրականացրել է ուսումնական, գիտական և հասարակությանը մատուցվող ծառայություններ՝ բարձրագույն կրթության զարգացման հիմնական հրամայականին համահունչ, որն է՝ գիտելիքահեն հասարակության ձևավորումը, Եվրոպական բարձրագույն կրթական տարածքին ինտեգրումը և միջազգային ասպարեզում մրցունակության ապահովումը:

Այս համատեքստում ԳՊՄԻ-ի հիմնական գործունեությունը միտված է եղել մատուցվող ծառայությունների որակական բարելավմանը, որակի մշակույթի ձևավորմանը, հարափոփոխ միջավայրին, ժամանակակից աշխատաշուկայի պահանջներին համապատասխան փոխանցելի գիտելիքներ և հմտություններ ունեցող շրջանավարտների թողարկմանը, տրվող որակավորման աստիճանների մրցունակության ապահովմանը, գործունեության թափանցիկությանը՝ բարձրացնելով բուհի հաշվետվողականությունը:

Հաշվետու տարին բուհի համար հոբելյանական էր. լրացավ բուհի հիմնադրման 80-ամյակը, որը նշվեց մեծ հանդիսավորությամբ:

# I. ԿՐԹԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ

Այսօր ինստիտուտն ունի 6 ֆակուլտետ՝ ֆիզիկամաթեմատիկական և տնտեսագիտության, բնագիտաաշխարհագրական, պատմաբանասիրական, մանկավարժության, օտար լեզուների, ֆիզիկական դաստիարակության և ՆԶՊ, 21 մասնագիտական ամբիոն, որոնք իրականացնում են 30 բակալավրի (առկա, հեռակա), 16 մագիստրատուրայի և 7 հետազոտողի մասնագիտության կրթական ծրագրեր:

Մասնագիտությունների կրթական ծրագրերում (ՄԿԾ) համապատասխան հաշվետու տարում վերանայվեցին և բարելավվեցին առարկայական նկարագրերը, գնահատման համակարգը, պրակտիկաների տեսակներն ու անցկացման ժամկետները և այլն: Վերանայվեց ամփոփիչ ատեստավորման համակարգը՝ դուրս գալով մասնագիտության մասնագրերի /սպեցիֆիկատորներ/ վերջնարդյունքներից: ՄԿԾ-ների պահանջներին համահունչ և առարկայական նկարագրերին համապատասխան ստեղծվել են էլեկտրոնային դասախոսությունների փաթեթներ, որոնք հասանելի են ուսանողներին տեղային ցանցով:

Ուսումնական գործընթացի կարևորագույն տարրերից է ուսանողների ուսումնառության արդյունքների գնահատումը: Գնահատման թափանցիկության, ակադեմիական ազնվության ապահովման, կոռուպցիոն դրսևորումների նվազեցման նպատակով և նկատի ունենալով ուսանողների, պրոֆեսորադասախոսական կազմի թիրախային խմբերում կատարված հարցումները՝ հաշվետու տարում կատարվել է ուսումնառության արդյունքների գնահատման և բողոքարկման ընթացակարգի լրամշակում:

Հաշվետու տարում բուհը մշակել է բակալավրի, մագիստրոսի և հետազոտողի կրթական մակարդակների մասնագիտական ծրագրերի մշակման, մշտադիտարկման, արդյունավետության գնահատման և բարելավման քաղաքականություն: Մշակվեցին և կիրառվեցին մշտադիտարկման և արդյունավետության գնահատման մեխանիզմներն ու գործիքակազմը:

Հաշվետու տարում մշակվեց և կիրառվեց դասընթացի, դասախոսի դասավանդման մեթոդների և գնահատման համակարգի գնահատման մեխանիզմները և գործիքակազմը: Ստեղծված գործիքակազմով վեր են հանվում ՄԿԾ-ից ներքին և արտաքին շահակիցների բավարարվածությունը, որի հիման վրա մեթոդական խորհուրդները կվերանայեն ծրագրերի համապատասխանությունն աշխատաշուկայի կարիքներին:

Շարունակվում է բարելավման և իրազեկման գործընթացը կրեդիտային համակարգի ներդրման արդյունավետության բարցրացման ուղղությամբ:

2013-2014 ուսումնական տարում առկա ուսուցման բոլոր կրթական ծրագրերով ավարտող շրջանավարտներին տրվել է երկլեզու /հայերեն և անգլերեն/ հավելվածով համաեվրոպական ձևաչափի դիպլոմ:

Ուսումնական գործընթացի կազմակերպման արդյունավետության բարձրացման նպատակով բարելավվեցին ներքին փաստաթղթաշրջանառության ցանցերը: Ինստիտուտում գործում է ներինստիտուտային երեք ցանց.

- միասնական ցանց բուհի կառուցվածքային բոլոր ստորաբաժանումների միջև՝ ուսումնական գործընթացին վերաբերող էլեկտրոնային փաստաթղթաշրջանառության նպատակով,
- միասնական ցանց ՌԻՄԿ-ի և դեկանատների միջև՝ ուսումնառության արդյունքների ամփոփման և կոռուպցիոն դրսևորումների նվազեցման նպատակով,

- միասնական ցանց ֆինանսական բաժնի և դեկանատների միջև՝ ուսման վարձավճարների վերահսկման և գործընթացի թափանցիկության ապահովման նպատակով:

Հաշվետու շրջանում բուհի կողմից մշակվել և իրականացվել է փաստաթղթերի նորմավորման, վավերացման, շրջանառության, պահպանման և արխիվացման հստակ քաղաքականություն, որի հիման վրա կառուցվածքային ստորաբաժանումներում ստեղծվել է իրենց գործունեությանը համահունչ կուռ փաստաթղթային բազա:

Բուհի մարդկային և նյութատեխնիկական ռեսուրսների արդյունավետ օգտագործման նպատակով ՈՒՄՎ-ի կողմից մասնագիտական ամբիոններին են տրամադրվել ուսումնական ծավալները: Հաշվետու շրջանում լուրջ աշխատանքներ են կատարվել ուսումնական գործընթացին վերաբերող տեղեկատվական ձևաթղթերի՝ ուսումնառության արդյունքների բազմագործոնային գնահատման տեղեկագրերի, կուրսային, ավարտական և մագիստրոսական աշխատանքների, պրակտիկայի գնահատման տեղեկագրերի բարելավման ուղղությամբ:

Բուհի լսարանային ֆոնդի արդյունավետ շահագործման և ուսումնական գործընթացի վերահսկման նպատակով ստեղծվել են էլեկտրոնային դասացուցակներ:

ՈւՄՎ-ի կողմից համակարգվել և վերահսկվել է պետական որակավորման քննությունների աշխատանքների կազմակերպումը, արդյունքների ամփոփումը, հաշվետվությունների կազմումը և արդյունքների վերլուծությունը:

Արդեն երկրորդ տարին է բուհում գործում է Բուհ-գործատու համագործակցության կենտրոնը, որի գործունեության հիմնական նպատակն աշխատաշուկայի պահանջներին համահունչ ՄԿԾ-ների բարելավումն է, ուսանողների, շրջանավարտների և գործատուների փոխշահավետ համագործակցութունը, աշխատաշուկայի վերաբերյալ տեղեկատվության հիման վրա խորհրդատվական ծառայությունների մատուցումը: ՄԿԾ-ների կարիքների վեր հանման նպատակով կազմակերպվել են բազմաթիվ

հանդիպումներ գործատուների հետ: Բուհ-գործատու համագործակցության կենտրոնի աշխատակիցների ջանքերով, Եվրամիության Tempus-ի HEN-GEAR ծրագրի օգնությամբ ստեղծվեց 2013-2014 ուսումնական տարվա շրջանավարտների տվյալների բազա, որը համապատասխան հարթակի օգնությամբ հասանելի է գործատուներին և պարունակում է ուսանողների ինչպես անձնական, այնպես էլ ակադեմիական տվյալները: Այժմ կենտրոնի կողմից համապատասխան հարթակում ստեղծվում է ՄԿԾ-ների մուտքագրում, որը ևս հասանելի կլինի ներքին և արտաքին շահակիցներին:

Արդեն երկրորդ տարին է բուհում գործում է **հետբուհական և լրացուցիչ կրթության բաժինը:** Բաժնի հիմնական գործառույթն է կազմակերպել հետազոտողի կրթական ծրագրի և լրացուցիչ կրթության իրականացման, պրոֆեսորադասախոսական կազմի վերապատրաստման գործընթացները: Հաշվետու տարում մշակվեց և կիրառվեց հետազոտողի կրթական ծրագրով սովորողների հաշվետվողության բարձրացման ընթացակարգը: Բարելավվեցին հետազոտողի կրթական ծրագրերը, դասընթացների կազմակերպումը, պրակտիկաների կազմակերպումը, ինչպես նաև չափելի դարձվեց հետազոտությանը տրվող կրեդիտները: Բաժնի կողմից կազմակերպվեց պրոֆեսորադասախոսական և ուսումնաօժանդակ կազմի «Տեղեկատվական տեխնոլոգիաները մասնագիտական ոլորտում» բաղադրիչի եռափուլ վերապատրաստում: Բուհի պրոֆեսորադասախոսական կազմի 50%-ից ավելին ատեստավորվեց: Այս տարի շարունակվում է պրոֆեսորադասախոսական կազմի ատեստավորման գործընթացը: Վերապատրաստումներ իրականացվում են նաև օտար լեզուների և էլետրոնային դասընթացներ կազմելու հմտություններ ձեռք բերելու ուղղություններով: Բուհի ավելի քան 80 մասնագետ այս ուսումնական տարի կատեստավորվի նաև այս ուղղություններով: «Դասավանդման մեթոդներ, գնահատում» բաղադրիչով վերապատրաստումներ իրականացնելու համար բուհը դիմել էր ԿԳ նախարարությանը և Կրթության ազգային ինստիտուտին, որն այս ուսումնական տարում կիրականացնի վերապատրաստումներ այս ուղղությամբ:

Բուհի ռազմավարական առաջնահերթություններից է պրոֆեսորադասախոսական կազմի հատուկ մասնագիտական առարկաների ուղղությամբ վերապատրաստումներ կազմակերպելը: 2015-2016 ուսումնական տարում նախատեսվում է մշակել ընթացակարգ, որի հիման վրա դասախոսական կազմի վերապատրաստումներ ինչպես հայաստանյան, այնպես էլ օտարերկրյա բուհերում՝ առկա, հեռակա կամ հեռավար եղանակով:

Պրոֆեսորադասախոսական կազմի և ուսանողական համակազմի շարժունությունն ապահովելու նպատակով ստեղծվել է **լեզուների ուսուցման կենտրոնը**: Կենտրոնի հիմնական նպատակն է բուհի ներքին շահակիցների լեզվաիմացության մակարդակի բարձրացումը:

Բուհի ներքին շահառուների կարիքների բավարարման նպատակով ստեղծվել է **հոգեբանական ծառայությունների կենտրոն:** Կենտրոնի գործունեության նպատակն է իրականացնել հոգեբանական ծառայություններ, գործնական հոգեբանության վերապատրաստումներ և սեմինարներ:

Բուհի կառուցվածքային ստորաբաժանումները հիմնականում ապահովված են նյութատեխնիկական անհրաժեշտ բազայով: Տեխնիկական վերազինումը մշտապես մնում է բուհի ղեկավարության ուշադրության կենտրոնում: Հաշվետու տարում վերանորոգվեց 6 լսարան՝ համապատասխանեցնելով էլեկտրոնային գրատախտակների շահագործման չափանիշներին:

# II. ՈՒ Ս Ա Ն Ո Ղ Ն Ե Ր

## ԱՌԿԱ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԲԱԿԱԼԱՎՐԻ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐՈՎ ՍՈՎՈՐՈՂ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ՝ ԸՍՏ ԿՈՒՐՍԵՐԻ

**2013-2014 ուստարի**
**Ընդամենը՝ 1176**




**2014-2015 ուստարի**
**Ընդամենը՝ 980**



## ՀԵՌԱԿԱ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԲԱԿԱԼԱՎՐԻ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐՈՎ ՍՈՎՈՐՈՂ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ՝ ԸՍՏ ԿՈՒՐՍԵՐԻ

2013-2014 ուստարի
Ընդամենը՝ 1676




2014-2015 ուստարի
Ընդամենը՝ 1550



# ՄԱԳԻՍՏՐՈՍԻ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐՈՎ ՍՈՎՈՐՈՂ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ՝ ԸՍՏ ԿՈՒՐՍԵՐԻ

## 2013-2014 ուստարի
## Ընդամենը՝ 377




## 2014-2015 ուստարի
## Ընդամենը՝ 393



# ՀԵՏԱԶՈՏՈՂԻ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐՈՎ /ՀԱՅՑՈՐԴ,ԱՍՊԻՐԱՆՏ/ ՍՈՎՈՐՈՂ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ՝ ԸՍՏ ԿՈՒՐՍԵՐԻ

2013-2014 ուստարի

Ընդամենը՝ 40

2014-2015 ուստարի

Ընդամենը՝ 30






# ԲԱԿԱԼԱՎՐԻ /ԱՌԿԱ/ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐՈՎ ԱՆՎՃԱՐ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ ՍՈՎՈՐՈՂ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ՝ ԸՍՏ ԿՈՒՐՍԵՐԻ

**2013-2014 ուստարի**
**Ընդամենը՝ 271**




**2014-2015 ուստարի**
**Ընդամենը՝ 260**



# ՄԱԳԻՍՏՐՈՍԻ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐՈՎ ԱՆՎՃԱՐ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ ՍՈՎՈՐՈՂ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ՝ ԸՍՏ ԿՈՒՐՍԵՐԻ

## 2013-2014 ուստարի

Ընդամենը՝ 71




## 2014-2015 ուստարի

Ընդամենը՝ 73



# ԱՌԿԱ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԲԱԿԱԼԱՎՐԻ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐՈՎ ՍՈՎՈՐՈՂ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ՝ ԸՍՏ ՖԱԿՈՒԼՏԵՏՆԵՐԻ

## 2013-2014 ուստարի
Ընդամենը՝ 1176




## 2014-2015 ուստարի
Ընդամենը՝ 984



# ՀԵՌԱԿԱ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԲԱԿԱԼԱՎՐԻ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐՈՎ ՍՈՎՈՐՈՂ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ՝ ԸՍՏ ՖԱԿՈՒԼՏԵՏՆԵՐԻ

## 2013-2014 ուստարի
## Ընդամենը՝ 1676




## 2014-2015 ուստարի
## Ընդամենը՝ 1541



# ՄԱԳԻՍՏՐՈՍԻ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐՈՎ ՍՈՎՈՐՈՂ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ՝ ԸՍՏ ՖԱԿՈՒԼՏԵՏՆԵՐԻ

## 2013-2014 ուստարի
Ընդամենը՝ 377




## 2014-2015 ուստարի
Ընդամենը՝ 393



## ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ՝ ԸՍՏ ՖԱԿՈՒԼՏԵՏՆԵՐԻ (ԲԱԿԱԼԱՎՐԻԱՏ /ԱՌԿԱ, ՀԵՌԱԿԱ/, ՄԱԳԻՍՏՐԱՏՈՒՐԱ)

**2013-2014 ուստարի**
**Ընդամենը՝ 3229**




**2014-2015 ուստարի**
**Ընդամենը՝ 2882**



## 2013-2014 ՈՒՍՏԱՐՈՒՄ ՏԱՐԿԵՏՈՒՄ ՄՏԱՑԱԾ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ

### ԱՌԿԱ ՈՒՍՈՒՑՈՒՄ՝ 29




### ՀԵՌԱԿԱ ՈՒՍՈՒՑՈՒՄ՝ 31




## 2013-2014 ՈՒՍՏԱՐՈՒՄ ՎԵՐԱԿԱՆԳՆՎԱԾ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ

### ԱՌԿԱ ՈՒՍՈՒՑՈՒՄ՝ 15




### ՀԵՌԱԿԱ ՈՒՍՈՒՑՈՒՄ՝ 52



# 2013-2014 ՈՒՍՏԱՐՈՒՄ ԱՅԼ ԲՈՒՀԵՐ ՏԵՂԱՓՈԽՎԱԾ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ

## ԱՌԿԱ ՈՒՍՈՒՑՈՒՄ՝ 11




## ՀԵՌԱԿԱ ՈՒՍՈՒՑՈՒՄ՝ 6




# 2013-2014 ՈՒՍՏԱՐՈՒՄ ԱՅԼ ԲՈՒՀԵՐԻՑ ՏԵՂԱՓՈԽՎԱԾ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ

## ԱՌԿԱ ՈՒՍՈՒՑՈՒՄ՝ 0




## ՀԵՌԱԿԱ ՈՒՍՈՒՑՈՒՄ՝ 5



# 2013-2014 ՈՒՍՏԱՐՈՒՄ ԵՐԿՐՈՐԴ ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ ՍՏԱՑՈՂ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ

## ԱՌԿԱ ՈՒՍՈՒՑՈՒՄ՝ 5




# 2013-2014 ՈՒՍՏԱՐՈՒՄ ԵՐԿՐՈՐԴ ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ ՍՏԱՑՈՂ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ

## ՀԵՌԱԿԱ ՈՒՍՈՒՑՈՒՄ՝ 3



# 2013-2014 ՈՒՍՏԱՐՈՒՄ ՀԵՌԱՑՎԱԾ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ՝ ԸՍՏ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԿԻՍԱՄՅԱԿՆԵՐԻ ԵՎ ՖԱԿՈՒԼՏԵՏՆԵՐԻ

## ԱՌԿԱ ՈՒՍՈՒՑՈՒՄ՝ 53




## ՀԵՌԱԿԱ ՈՒՍՈՒՑՈՒՄ՝ 100



## 2013-2014 ՈՒՍՏԱՐՈՒՄ ԲԱԿԱԼԱՎՐԻ /ԱՌԿԱ/ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐՈՎ 85-ԻՑ ԲԱՐՁՐ ՄՈԳ ՈՒՆԵՑՈՂ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿՆ ԸՍՏ ԿՈՒՐՍԵՐԻ

I կիսամյակ՝ 78, II կիսամյակ՝ 129



# 2013-2014 ՈՒՍՏԱՐՈՒՄ ՄԱԳԻՍՏՐՈՍԻ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐՈՎ 90-Ից ԲԱՐՁՐ ՄՈԳ ՈՒՆԵՑՈՂ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿՆ ԸՍՏ ԿՈՒՐՍԵՐԻ

I կիսամյակ՝ 49, II կիսամյակ՝ 70



## ԲԱԿԱԼԱՎՐԻ (ԱՌԿԱ) ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐՈՎ  ԿՐԹԱԹՈՇԱԿ ՍՏԱՑՈՂ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿՆ ԸՍՏ ԿՈՒՐՍԵՐԻ

2013-2014 ուստարի
Ընդամենը՝ 287




2014-2015 ուստարի
Ընդամենը՝  305



## ՄԱԳԻՍՏՐՈՍԻ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐՈՎ ԿՐԹԱԹՈՇԱԿ ՍՏԱՑՈՂ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿՆ ԸՍՏ ԿՈՒՐՍԵՐԻ

2013-2014 ուստարի
Ընդամենը՝ 123




2014-2015 ուստարի
Ընդամենը՝ 125



# 2013-2014 ՈՒՍՏԱՐՈՒՄ ԲԱԿԱԼԱՎՐԻ (ԱՌԿԱ/ՀԵՌԱԿԱ) ԵՎ ՄԱԳԻՍՏՐՈՍԻ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐՈՎ ՈՒՍՄԱՆ ՎԱՐՁԱՎՃԱՐԻ ՄԱՍՆԱԿԻ ՓՈԽՀԱՏՈՒՑՄԱՄԲ ՍՈՎՈՐՈՂ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԹՎԱՔԱՆԱԿԸ՝ 292

## 2-րդ կիսամյակ

ԱՌԿԱ /ԲԱԿԱԼԱՎՐ /
ԸՆԴԱՄԵՆԸ՝ 54




ՀԵՌԱԿԱ /ԲԱԿԱԼԱՎՐ/
ԸՆԴԱՄԵՆԸ՝ 139




ՄԱԳԻՍՏՐԱՏՈՒՐԱ
ԸՆԴԱՄԵՆԸ՝ 38



## 2013-2014 ՈՒՍՏԱՐՈՒՄ ԲԱԿԱԼԱՎՐԻ (ԱՌԿԱ/ՀԵՌԱԿԱ) ԵՎ ՄԱԳԻՍՏՐՈՍԻ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐՈՎ ԱՐՏՈՆՈՒԹՅԱՄԲ ՍՈՎՈՐՈՂ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԹՎԱՔԱՆԱԿԸ՝ 38

ԱՌԿԱ /ԲԱԿԱԼԱՎՐ /
ԸՆԴԱՄԵՆԸ՝ 13




ՀԵՌԱԿԱ /ԲԱԿԱԼԱՎՐ/
ԸՆԴԱՄԵՆԸ՝ 15




ՄԱԳԻՍՏՐԱՏՈՒՐԱ
ԸՆԴԱՄԵՆԸ՝ 10



## 2013-2014 ՈՒՍՏԱՐՎԱ ԲԱԿԱԼԱՎՐԻ (ԱՌԿԱ/ՀԵՌԱԿԱ) ԵՎ ՄԱԳԻՍՏՐՈՍԻ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐՈՎ ՇՐՋԱՆԱՎԱՐՏՆԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԹՎԱՔԱՆԱԿԸ՝980 ԳԵՐԱԶԱՆՑՈՒԹՅԱՄԲ՝ 19

ԱՌԿԱ /ԲԱԿԱԼԱՎՐ
ԸՆԴԱՄԵՆԸ՝ 366




ՀԵՌԱԿԱ /ԲԱԿԱԼԱՎՐ/
ԸՆԴԱՄԵՆԸ՝ 402




ՄԱԳԻՍՏՐԱՏՈՒՐԱ
ԸՆԴԱՄԵՆԸ՝ 212



# 2014-2015 ՈՒՍՏԱՐՎԱ ԱՌԿԱ ԲԱԿԱԼԱՎՐԻ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐՈՎ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆ

2014-2015 ուստարում բուհին հատկացված 627 (70 անվճար, 557 վճարովի) տեղերից իրացվել է 228-ը (64 անվճար, 164 վճարովի, որից 2-ը՝ արտոնությամբ), այսինքն՝ հատկացված տեղերի մոտ 37%-ը՝ նախորդ տարվա 57 % փոխարեն:

| № | Մասնագիտություն | Պլանային | | | I հայտով դիմորդներ | II հայտով դիմորդներ | I հայտով ընդունվածներ | II հայտով ընդունվածներ | Ընդամենը ընդունված են | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | Պ/Պ | ՎՃ. | Ընդամենը | | | | | Պ/Պ | ՎՃ. | Արտ. | Ընդամենը |
| 1 | Հայոց լեզու և գրականություն | 4 | 21 | 25 | 13 | 16 | 13 | | 4 | 9 | | 13 |
| 2 | Լրագրություն | 1 | 14 | 15 | 2 | 2 | 2 | | 1 | 1 | | 2 |
| 3 | Պատմություն | 4 | 21 | 25 | 17 | 10 | 16 | | 4 | 11 | 1 | 16 |
| 4 | Իրավագիտություն | 3 | 21 | 24 | 12 | 21 | 3 | | 3 | | | 3 |
| 5 | Ռուսաց լեզու և գրականություն | 2 | 18 | 20 | 5 | 5 | 5 | | 2 | 2 | 1 | 5 |
| 6 | Անգլերեն լեզու և գրականություն | 6 | 54 | 60 | 26 | 25 | 22 | | 6 | 16 | | 22 |
| 7 | Ֆրանսերեն լեզու և գրականություն | 2 | 8 | 10 | 2 | 2 | 2 | | 2 | | | 2 |
| 8 | Գերմաներեն լեզու և գրականություն | | 8 | 8 | | 1 | | | | | | 0 |
| 9 | Թարգմանչական գործ՝ անգլերեն, հայերեն | | 15 | 15 | | 4 | 1 | 1 | | 2 | | 2 |
| 10 | Թարգմանչական գործ՝ անգլերեն, ռուսերեն | | 15 | 15 | | 6 | 6 | | | 6 | | 6 |
| 11 | Ինֆորմատիկա և կիրառական մաթեմատիկա | 3 | 18 | 21 | 5 | 12 | 12 | | 3 | 9 | | 12 |

| | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 12 | Ինֆորմատիկա /տեղեկաբանություն/ | | 15 | 15 | | 2 | | | | | | 0 |
| 13 | Մաթեմատիկա | 2 | 18 | 20 | 3 | 6 | 3 | | 2 | 1 | | 3 |
| 14 | Ֆիզիկա | 2 | 18 | 20 | 2 | 2 | 3 | | 2 | 1 | | 3 |
| 15 | Կառավարում | 2 | 21 | 23 | 8 | 3 | 6 | | 2 | 4 | | 6 |
| 16 | Դեղագործական քիմիա | 2 | 16 | 18 | 8 | 9 | 6 | | 3 | 3 | | 6 |
| 17 | Կենսաբանություն | 2 | 15 | 17 | 2 | 18 | 8 | 2 | 1 | 9 | | 10 |
| 18 | Աշխարհագրություն | 2 | 15 | 17 | | 8 | 5 | | 2 | 3 | | 5 |
| 19 | Բնապահպանություն և բնօգտագործում | 2 | 15 | 17 | | | | | | | | 0 |
| 20 | Քիմիա | 2 | 10 | 12 | | | | | | | | 0 |
| 21 | Քարտեզագրություն և կադաստրային գործ | 2 | 20 | 22 | 5 | | 3 | 1 | 2 | 2 | | 4 |
| 22 | Սերվիս | 2 | 20 | 22 | 6 | 5 | 5 | | 2 | 3 | | 5 |
| 23 | Կիրառական արվեստ | 4 | 21 | 25 | 9 | 8 | 8 | | 4 | 4 | | 8 |
| 24 | Սոցիալական աշխատանք | | 25 | 25 | | 10 | 3 | | | 3 | | 3 |
| 25 | Մանկավարժություն և մեթոդիկա /տարր. կրթության/ | 3 | 22 | 25 | 6 | 39 | 33 | 14 | 3 | 44 | | 47 |
| 26 | Հոգեբանություն | 2 | 18 | 20 | | 13 | 4 | | | 4 | | 4 |
| 27 | Մանկավարժություն և հոգեբանություն /նախադպրոցական/ | | 10 | 10 | | 1 | 1 | | | 1 | | 1 |
| 28 | Ֆիզիկական կուլտուրա և սպորտ | 6 | 25 | 31 | 18 | 17 | 14 | | 6 | 8 | | 14 |
| 29 | Նախազորակոչային և ֆիզիակական պատրաստություն | 10 | 40 | 50 | 38 | 38 | 26 | | 10 | 16 | | 26 |
| | Ընդամենը | 70 | 557 | 627 | 187 | 283 | 210 | 18 | 64 | 162 | 2 | 228 |

# 2014-2015 ՈՒՍՏԱՐՎԱ ՀԵՌԱԿԱ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԲԱԿԱԼԱՎՐԻ ԿՐԹԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

2014-2015 ուստարում բուհին հատկացված 525 /վճարովի/ տեղերից իրացվել է 200 /որից 1-ը՝ արտոնությամբ/ տեղ, այսինքն՝ հատկացված տեղերի մոտ 38%-ը:

| № | Մասնագիտություն | Պլանային | դիմորդներ | ընդունվածներ | Ընդամենը ընդունված են | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | Վճ. | | | Վճ. | Արտ. | Ընդամենը |
| 1 | Հայոց լեզու և գրականություն | 25 | 4 | 3 | 3 | | 3 |
| 2 | Լրագրություն | 15 | 1 | | | | 0 |
| 3 | Պատմություն | 25 | 7 | 7 | 7 | | 7 |
| 4 | Իրավագիտություն | 25 | 23 | 22 | 21 | 1 | 22 |
| 5 | Ռուսաց լեզու և գրականություն | 20 | 4 | 3 | 3 | | 3 |
| 6 | Անգլերեն լեզու և գրականություն | 20 | 6 | 5 | 5 | | 5 |
| 7 | Ֆրանսերեն լեզու և գրականություն | 10 | | | | | 0 |
| 8 | Ինֆորմատիկա /տեղեկաբանություն/ | 20 | 13 | 13 | 13 | | 13 |
| 9 | Մաթեմատիկա | 15 | 6 | 6 | 6 | | 6 |
| 10 | Ֆիզիկա | 15 | 4 | 4 | 4 | | 4 |
| 11 | Կառավարում | 15 | 10 | 9 | 9 | | 9 |
| 12 | Դեղագործական քիմիա | 20 | 8 | 7 | 7 | | 7 |
| 13 | Կենսաբանություն | 15 | 9 | 5 | 5 | | 5 |
| 14 | Աշխարհագրություն | 15 | 8 | 7 | 7 | | 7 |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| 15 | Բնապահպանություն և բնօգտագործում | 15 | 1 | | | | 0 |
| 16 | Քիմիա | 15 | 1 | | | | 0 |
| 17 | Քարտեզագրություն  և կադաստրային գործ | 15 | 4 | 3 | 3 | | 3 |
| 18 | Սերվիս | 15 | 1 | 1 | 1 | | 1 |
| 19 | Կիրառական արվեստ | 15 | 4 | 4 | 4 | | 4 |
| 20 | Սոցիալական աշխատանք | 20 | 11 | 10 | 10 | | 10 |
| 21 | Մանկավարժություն և մեթոդիկա /տարր. կրթության/ | 25 | 25 | 19 | 19 | | 19 |
| 22 | Հոգեբանություն | 20 | 19 | 16 | 16 | | 16 |
| 23 | Մանկավարժություն և հոգեբանություն /նախադպրոցական/ | 15 | 12 | 9 | 9 | | 9 |
| 24 | Ֆիզիկական կուլտուրա և սպորտ | 25 | 20 | 17 | 17 | | 17 |
| 25 | Նախազորակոչային և ֆիզիակական պատրաստություն | 30 | 36 | 21 | 21 | | 21 |
| 26 | Գրադարանային տեղեկ. աղբյուրներ | 15 | 2 | 2 | 2 | | 2 |
| 27 | Սոցիալական մանկավարժություն | 15 | 7 | 6 | 6 | | 6 |
| 28 | Երաժշտական կրթություն | 15 | 1 | 1 | 1 | | 1 |
| 29 | Տեխնոլոգիա և ձեռնարկչություն | 15 | | | | | 0 |
| | Ընդամենը | 525 | 247 | 200 | 199 | 1 | 200 |

# 2014-2015 ՈՒՍՏԱՐՎԱ ՄԱԳԻՍՏՐԱՏՈՒՐԱՅԻ ԿՐԹԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

2014-2015 ուստարում բուհին հատկացված 281 /38 անվճար, 243 վճարովի/ տեղերից իրացվել է 226 /37 անվճար, 189 վճարովի, որից 5-ը՝ արտոնությամբ / տեղ, այսինքն՝ հատկացված տեղերի մոտ 81%-ը:

| № | Մասնագիտություն | Պլանային | | | I հայտով դիմորդներ | Ընդունվածներ | Ընդամենը ընդունված են | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | Պ/Պ | Վճ. | Ընդամենը | | | Պ/Պ | Վճ. | Արտ. | Ընդամենը |
| 1 | Հայոց լեզու և գրականություն | 2 | 18 | 20 | 17 | 14 | 1 | 12 | 1 | 14 |
| 2 | Պատմություն | 3 | 17 | 20 | 14 | 14 | 4 | 10 | | 14 |
| 3 | Իրավագիտություն | 3 | 17 | 20 | 20 | 20 | 2 | 18 | | 20 |
| 4 | Ռուսաց լեզու և գրականություն | 2 | 10 | 12 | 15 | 12 | 2 | 10 | | 12 |
| 5 | Անգլերեն լեզու և գրականություն | 4 | 21 | 25 | 21 | 18 | 3 | 15 | | 18 |
| 6 | Ինֆորմատիկա /տեղեկաբանություն/ | 2 | 10 | 12 | 5 | 5 | 2 | 3 | | 5 |
| 7 | Մաթեմատիկա | 3 | 7 | 10 | 8 | 8 | 5 | 3 | | 8 |
| 8 | Ֆիզիկա | 2 | 8 | 10 | 7 | 6 | 2 | 4 | | 6 |
| 9 | Կառավարում | 3 | 16 | 19 | 20 | 17 | 4 | 13 | | 17 |
| 10 | Կենսաբանություն | 3 | 12 | 15 | 14 | 14 | 3 | 11 | | 14 |
| 11 | Աշխարհագրություն | 3 | 7 | 10 | 9 | 7 | 3 | 4 | | 7 |
| 12 | Մանկավարժություն և մեթոդիկա /տարր. կրթության/ | 2 | 4 | 6 | 18 | 14 | 1 | 13 | | 14 |
| 13 | Հոգեբանություն | 4 | 31 | 35 | 29 | 26 | 3 | 23 | | 26 |
| 14 | Ֆիզիկական կուլտուրա և | | 8 | 8 | 3 | 4 | | 3 | 1 | 4 |

| | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | սպորտ | | | | | | | | | |
| 15 | Նախազորակոչային և ֆիզիկական պատրաստություն | 2 | 17 | 19 | 18 | 19 | 2 | 14 | 3 | 19 |
| 16 | Գեղանկարչություն | | 20 | 20 | 5 | 5 | | 5 | | 5 |
| 17 | Կրթության կազմակերպում | | 20 | 20 | 26 | 23 | | 23 | | 23 |
| | | 38 | 243 | 281 | 249 | 226 | 37 | 184 | 5 | 226 |

## 2014-2015 ՈՒՍՏԱՐՎԱ ԸՆԴՈՒՆՎԱԾՆԵՐԻ ԹՎԱԿԱԶՄԸ՝ ԸՍՏ ԴՊՐՈՑՆԵՐԻ

| Դպրոցի անվանումը | Ընդամենը | Դիմորդների թիվը /բակալավր առկա/ | Դիմորդների թիվը /բակալավր հեռակա/ |
|---|---|---|---|
| Գյումրու թիվ 37 ա/դ | 31 | 24 | 7 |
| Գյումրու ակադեմիական վարժարան | 27 | 22 | 5 |
| Գյումրու թիվ 2 ա/դ | 27 | 19 | 8 |
| Գյումրու ՀՊՏՀ վարժարան | 17 | 14 | 3 |
| Գյումրու թիվ 18 մ/դ | 17 | 7 | 10 |
| Գյումրու թիվ 3 ա/դ | 16 | 10 | 6 |
| Գյումրու «Ֆոտոն» վարժարան | 13 | 12 | 1 |
| Գյումրու թիվ 1 ա/դ | 12 | 8 | 4 |
| Գյումրու «Բալատոն» ա/դ | 10 | 8 | 2 |
| Գյումրու բժշկական քոլեջ | 7 | 0 | 7 |
| Գյումրու թիվ 4 ուսումնարան | 7 | 0 | 7 |
| Մայիսյանի մ/դ | 7 | 4 | 3 |
| Հայկավանի մ/դ | 6 | 4 | 2 |

| | | | |
|---|---|---|---|
| Գյումրու օլիմպիական հերթափոխի պետական դպրոց | 6 | 2 | 4 |
| Փոքր Սարիարի մ/դ | 6 | 5 | 1 |
| Ախուրյանի Ն.  Աղբալյանի անվ.մ/դ | 6 | 3 | 3 |
| Գյումրու թիվ 27 մ/դ | 5 | 5 | 0 |
| Երազգավորսի մ/դ | 5 | 2 | 3 |
| Մարմաշենի մ/դ | 5 | 3 | 2 |
| Գյումրու թիվ 26 ա/դ | 5 | 3 | 2 |
| Գյումրու թիվ 45 մ/դ | 5 | 3 | 2 |
| Ազատանի մ/դ | 5 | 4 | 1 |
| Իսահակյանի մ/դ | 4 | 4 | 0 |
| Գյումրու մանկավարժական քոլեջ | 4 | 0 | 4 |
| Կրասարի մ/դ | 4 | 3 | 1 |
| Բայանդուրի մ/դ | 4 | 3 | 1 |
| Գյումրու թիվ 8 մ/դ | 4 | 3 | 1 |
| Հոռոմի մ/դ | 4 | 2 | 2 |
| Լեռնակերտի մ/դ | 4 | 2 | 2 |
| Առափիի մ/դ | 4 | 1 | 3 |
| Լուսաղբյուրի մ/դ | 3 | 3 | 0 |
| Թորոսգյուղի մ/դ | 3 | 0 | 3 |
| Գյումրու մանկավարժական ուսումնարան | 3 | 0 | 3 |
| Մուսայելյանի մ/դ | 3 | 2 | 1 |
| Գետքի մ/դ | 3 | 2 | 1 |
| Կամոյի մ/դ | 3 | 2 | 1 |
| Նոր Կյանքի մ/դ | 3 | 2 | 1 |
| Գյումրու թիվ 42 մ/դ | 3 | 2 | 1 |

| | | | |
|---|---|---|---|
| Լուսակերտի մ/դ | 3 | 1 | 2 |
| Աշոցքի մ/դ | 3 | 1 | 2 |
| Ցողամարգի մ/դ | 3 | 1 | 2 |
| Հացիկի մ/դ | 3 | 1 | 2 |
| Սիզավետի մ/դ | 2 | 1 | 1 |
| Բենիամինի մ/դ | 2 | 1 | 1 |
| Ձորակապի մ/դ | 2 | 1 | 1 |
| Հողմիկի մ/դ | 2 | 1 | 1 |
| Ջուլգաղբյուրի մ/դ | 2 | 1 | 1 |
| Գյումրու թիվ 11 մ/դ | 2 | 1 | 1 |
| Սառնաղբյուրի մ/դ | 2 | 2 | 0 |
| Գյումրու թիվ 19 մ/դ | 2 | 2 | 0 |
| Մեղրաշենի մ/դ | 2 | 2 | 0 |
| Վահրամաբերդի մ/դ | 2 | 2 | 0 |
| Սարատակի մ/դ | 2 | 2 | 0 |
| Գյումրու թիվ 40 մ/դ | 2 | 0 | 2 |
| Գոգհովիտի մ/դ | 2 | 0 | 2 |
| Գյումրու թիվ 23 մ/դ | 2 | 0 | 2 |
| Թավշուտի մ/դ | 2 | 0 | 2 |
| Պետական Գյուղատնտեսական քոլեջ | 2 | 0 | 2 |
| Ամասիայի մ/դ | 2 | 0 | 2 |
| Գյումրու թիվ 4 մ/դ | 2 | 0 | 2 |
| Գյումրու թիվ 7 մ/դ | 2 | 0 | 2 |
| Արագածավանի թիվ 1 մ/դ | 2 | 0 | 2 |
| Շիրակավանի մ/դ | 2 | 0 | 2 |

| | | | |
|---|---|---|---|
| Հողմիկի մ/դ | 2 | 0 | 2 |
| Գյումրու թիվ 1 արհեստակցական դպրոց | 2 | 0 | 2 |
| Սեպասարի մ/դ | 1 | 1 | 0 |
| Հայկաձորի մ/դ | 1 | 1 | 0 |
| ԼՂՀ Հայկազյան մ/դ | 1 | 1 | 0 |
| Անուշավանի մ/դ | 1 | 1 | 0 |
| Մարալիկի թիվ 1 մ/դ | 1 | 1 | 0 |
| Արթիկի թիվ 3 մ/դ | 1 | 1 | 0 |
| Պեմզաշենի մ/դ | 1 | 1 | 0 |
| Քարակերտի մ/դ | 1 | 1 | 0 |
| Փոքրաշենի մ/դ | 1 | 1 | 0 |
| Սպանդարյանի մ/դ | 1 | 1 | 0 |
| Ոսկեհասկի մ/դ | 1 | 1 | 0 |
| Ախուրիկի մ/դ | 1 | 1 | 0 |
| Գյումրու թիվ 32 մ/դ | 1 | 1 | 0 |
| Աղինի մ/դ | 1 | 1 | 0 |
| Շիրակի մ/դ | 1 | 1 | 0 |
| Փանիկի մ/դ | 1 | 1 | 0 |
| Գեղանիստի մ/դ | 1 | 1 | 0 |
| Գետափի մ/դ | 1 | 1 | 0 |
| ՌԴ Պարկովի թիվ 18 դպր. | 1 | 0 | 1 |
| Հայաբուսակ | 1 | 0 | 1 |
| Բանդիվանի մդ/ | 1 | 0 | 1 |
| Շիրակի մ/դ | 1 | 0 | 1 |
| Արթիկի թիվ 1 մ/դ | 1 | 0 | 1 |

| | | | |
|---|---|---|---|
| Սարատակի մ/դ | 1 | 0 | 1 |
| Ղազանչիի մ/դ | 1 | 0 | 1 |
| Կումայրիի մ/դ | 1 | 0 | 1 |
| ՀՀ Ոստիկանության կրթահամալիր | 1 | 0 | 1 |
| Ախուրյանի թիվ 2 մ/դ | 1 | 0 | 1 |
| Բերդաշենի մ/դ | 1 | 0 | 1 |
| Պարտիզակի մ/դ | 1 | 0 | 1 |
| Ղարիբջանյանի մ/դ | 1 | 0 | 1 |
| Ջրաձորի մ/դ | 1 | 0 | 1 |
| Հացիկի մ/դ | 1 | 0 | 1 |
| Մանկավարժական համալսարանի մանկավարժական քոլեջ | 1 | 0 | 1 |
| Բավրայի մ/դ | 1 | 0 | 1 |
| Երևանի թիվ 62 ա/դ | 1 | 0 | 1 |
| Երևանի թիվ 83 ա/դ | 1 | 0 | 1 |
| Կրաշենի մ/դ | 1 | 0 | 1 |
| Բյուրակնի մ/դ | 1 | 0 | 1 |
| ՌԴ Ժելեզնովոդսկի թիվ 5 դպր․ | 1 | 0 | 1 |
| Գյումրու թիվ 31 հ/դ | 1 | 0 | 1 |
| Ակունքի մ/դ | 1 | 0 | 1 |
| Նահապետավանի մ/դ | 1 | 0 | 1 |
| Եվրոպական քոլեջ | 1 | 0 | 1 |
| Գյումրու Մշակույթի վարժարան | 1 | 0 | 1 |
| Ճոճկանի մ/դ | 1 | 0 | 1 |
| Ղարիբջանյանի մ/դ | 1 | 0 | 1 |
| Գյումրու թիվ 33 ա/դ | 1 | 0 | 1 |

| | | | |
|---|---|---|---|
| Իսահակյանի մ/դ | 1 | 0 | 1 |
| Սարահարթի մ/դ | 1 | 0 | 1 |
| Մեծ Մանթաշի մ/դ | 1 | 0 | 1 |
| Երևանի պետական երաժշտական քոլեջ | 1 | 0 | 1 |
| Փոքրաշենի մ/դ | 1 | 0 | 1 |
| Նոր Հաճնի թիվ 1 մ/դ | 1 | 0 | 1 |
| Արևշատի մ/դ | 1 | 0 | 1 |
| Գեղաձորի մ/դ | 1 | 0 | 1 |
| Արթիկի պետական քոլեջ | 1 | 0 | 1 |
| Ջրառատի մ/դ | 1 | 0 | 1 |
| Գուսանագյուղի մ/դ | 1 | 0 | 1 |
| Գյումրու թիվ 17 մ/դ | 1 | 0 | 1 |
| Գյումրու թիվ 10 մ/դ | 1 | 0 | 1 |
| Ծաղկաբերդի մ/դ | 1 | 0 | 1 |
| Արարատի թիվ 6 մ/դ | 1 | 0 | 1 |
| Գյումրու պոլիտեխնիկում | 1 | 0 | 1 |
| Գյումրու թիվ 6 մ/դ | 1 | 0 | 1 |
| Գյումրու թիվ 41 հ/դ | 1 | 0 | 1 |
| Քեթիի մ/դ | 1 | 0 | 1 |
| Գյումրու թիվ 12 ա/դ | 1 | 0 | 1 |
| Մարալիկի թիվ 2 մ/դ | 1 | 0 | 1 |
| Հայրենյացի մ/դ | 1 | 0 | 1 |
| Ընդամենը | 429 | 231 | 198 |

# ՄԻՋԻՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԲԱԺԻՆ

Հաշվետու տարում միջին մասնագիտական կրթության բաժինը ընդունելությունը կազմակերպեց 7 մասնագիտությունների ուղղությամբ.

1. Թարգմանություն/մաքսավարություն
2. Թարգմանություն/արխիվավարություն
3. Թարգմանություն/գործավարություն
4. Սոցիալական աշխատանք
5. Շուկայաբանություն /ըստ ճյուղերի/
6. Նախադպրոցական կրթություն
7. Զբոսաշրջություն

Միջին մասնագիտական կրթության բաժինը ունի 129 ուսանողներ, որոնցից 72 ընդունվել են 2014-2015 ուսումնական տարում առաջին կուրս վերոնշյալ մասնագիտություններով, իսկ 24 դիմորդներ հնարավորություն ունեցավ իր ուսումը շարունակելու *նախադպրոցական* կրթություն բաժնի 2-րդ կուրսում՝ ստանալով 2-րդ մասնագիտություն: Հաշվետու տարում ուսումնառությունը կազմակերպվել է միայն առկա համակարգով: 129 ուսանողներից 72-ը սովորում են պետպատվերի շրջանակում, իսկ 57-ը՝ վճարովի:

2013-2014 ուսումնական տարում միջին մասնագիտական կրթության բաժինը ավարտել է 82 ուսանող, որից 22-ին շնորհվել է գերազանցության դիպլոմ: Շրջանավարտներից 15-ը ուսումը շարունակել է բուհի համապատասխան մասնագիտությունների կրթական ծրագրերով:

Միջին մասնագիտական կրթության բաժինում աշխատում է 27 դասախոս, որոնց միջին տարիքը չի գերազանցում 40-ը: Դասախոսների մեծ մասը վերապատրաստված է և կարողանում է իրականացնել մոդուլային համակարգի դասընթացներն ըստ վերջնարդյունքների:

## ԳՊՄԻ-Ի ԱՎԱԳ ԴՊՐՈՑ

Բուհը հաշվետու տարում շարունակում է «ԳՊՄԻ ավագ դպրոցի» կայացման ուղղությամբ իրականացվող աշխատանքները՝ օգտագործելով իր մարդկային և նյութատեխնիկական ռեսուրսները: Լուրջ աշխատանքներ են ծավալվում աշակերտների մասնագիտական կողմնորոշման ուղղությամբ: Ավագ դպրոցի 10-12-րդ դասարանների աշակերտների համար կազմակերպվել են բուհի բարձրակարգ մասնագետների կողմից իրականացվող լրացուցիչ դասընթացներ՝ միասնական քննություններին բարձր արդյունքներ ցուցաբերելու նպատակով:

Խորապես գիտակցելով այն հանգամանքը, որ հանրակրթական ոլորտի բարեփոխումների ներկա փուլի հիմնական խնդիրը որակի ապահովումն է, հաշվետու տարում գիտական խորհրդի կողմից հաստատվել է «Գյումրու Մ. Նալբանդյանի անվան պետական մանկավարժական ինստիտուտ» ՊՈԱԿ-ի ավագ դպրոցի կրթության որակի ապահովման ընթացակարգային դրույթներ» կարևորագույն փաստաթուղթը: Հաստատվել է ԳՊՄԻ-ի ավագ դպրոցի զարգացման հնգամյա ռազմավարական ծրագիրը: Ավագ դպրոցի ուսումնական գործընթացում առավելագույնս ներգրավված են բուհի բոլոր ստորաբաժանումները: Դպրոցն այսօր ունի ձևավորված և մոտիվացված աշակերտական համակազմ՝ 10-րդ դասարանում՝ 40 աշակերտ, 11-րդ դասարանում՝ 22 աշակերտ, 12-րդ դասարանում՝ 51 աշակերտ:

Ձեռնարկվել են ամենատարբեր միջոցառումներ աշակերտների ուսումնառությունն արդյունավետ դարձնելու նպատակով: Լաբորատոր աշխատանքներն անցկացվում են բուհի քիմիայի, ֆիզիկայի, կենսաբանության, ինֆորմատիկայի լաբորատորիաներում: Աշակերտներն օգտվում են ինստիտուտի գրադարանային ֆոնդից:

Աշակերտները մասնակցել են հանրապետական առարկայական օլիմպիադաների՝ արժանանալով դիպլոմների և գովասանագրերի:

Կազմակերպվել և իրականացվել են տարբեր միջոցառումներ աշակերտների ինտելեկտուալ մակարդակի բարձրացման, ռազմահայրենասիրական, ֆիզիկական, էկոլոգիական դաստիարակությունների ամրապնդման ուղղությամբ: Հաշվետու տարում կազմակերպվել են տարաբնույթ միջոցառումներ, էքսկուրսիաներ, այցելություն մշակութային օջախներ, տարբեր թեմաներով քննարկումներ և այլն:

# III. ՊՐՈՖԵՍՈՐԱԴԱՍԱԽՈՍԱԿԱՆ ԵՎ ՈՒՍՈՒՄՆԱՕԺԱՆԴԱԿ ԿԱԶՄ

Մասնագիտական կրթական ծրագրերի նպատակներն իրականացնելու համար բուհն ապահովված է անհրաժեշտ մասնագիտական որակավորումներ ունեցող պրոֆեսորադասախոսական և ուսումնաօժանդակ կազմով: Հաշվետու շրջանում լուրջ ձեռքբերումներից մեկն այն է, որ գործածության մեջ է դրվել ԳՊՄԻ-ի պրոֆեսորադասախոսական և ուսումնաօժանդակ կազմի ձևավորման լրամշակված կանոնակարգը, որին համապատասխան իրականացվել է դասախոսական կազմի տարակարգումը, պաշտոնների տեղակալումը, պայմանագրերի վերանայումը և լրամշակումը:

Հաշվետու տարում պրոֆեսորադասախոսական կազմի հիմնական մասը անցել է վերապատրաստումներ տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառումը ուսումնական գործընթացում՝ հաղթահարելով ատեստավորման փուլը, մասնակիորեն նաև դասավանդման մեթոդիկաներից:

Մինչև ուսումնական տարվա վերջ պրոֆեսորադասախոսական կազմը վերապատրաստվելու է ընդհանրական-պարտադիր՝ մանկավարժական /դասավանդման մեթոդներ, գնահատում/ և օտար լեզուն մասնագիտական գործընթացում ուղղություններով: Հատուկ մասնագիտական ուղղություններով վերապատրաստման համար նախ կմշակվեն դասախոսի կրթական կարիքների վեր հանման մեխանիզմները և քաղաքականությունը, այնուհետև՝ կրթական կարիքներին համապատասխան կիրականացվի մասնագիտական վերապատրաստումը:

# ՊՐՈՖԵՍՈՐԱԴԱՍԱԽՈՍԱԿԱՆ ԿԱԶՄԸ ԸՍՏ ԳԻՏԱԿԱՆ ԱՍՏԻՃԱՆՆԵՐԻ

## 2013-2014 ուստարի




## 2014-2015 ուստարի



# ՊՐՈՖԵՍՈՐԱԴԱՍԱԽՈՍԱԿԱՆ ԿԱԶՄԸ ԸՍՏ ԳԻՏԱԿԱՆ ԿՈՉՈՒՄՆԵՐԻ

## 2013-2014 ուստարի




## 2014-2015 ուստարի



# ՊՐՈՖԵՍՈՐԱԴԱՍԱԽՈՍԱԿԱՆ ԿԱԶՄՆ ԸՍՏ ԳԵՆԴԵՐԱՅԻՆ ԲԱՇԽՎԱԾՈՒԹՅԱՆ

**2013-2014 ուստարի**




**2014-2015 ուստարի**



# ՊՐՈՖԵՍՈՐԱԴԱՍԱԽՈՍԱԿԱՆ ԿԱԶՄՆ ԸՍՏ ՏԱՐԻՔԱՅԻՆ ԽՄԲԵՐԻ

## 2013-2014 ուստարի




## 2014-2015 ուստարի



# ԳԻՏԱԿԱՆ ԿՈՉՈՒՄ ԵՎ ԱՍՏԻՃԱՆ ՍՏԱՑԱԾ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ՝ ԸՍՏ ՎԵՐՋԻՆ ՀԻՆԳ ՏԱՐԻՆԵՐԻ



# 2014-2015 ՈՒՍՏԱՐՎԱ ԱՄԲԻՈՆՆԵՐԻ ԾԱՆՐԱԲԵՌՆՎԱԾՈՒԹՅՈՒՆՆ ԸՍՏ ԺԱՄԱՔԱՆԱԿԻ

## ԸՆԴԱՄԵՆԸ՝ 152 129 ժամ



# 2014-2015 ՈՒՍՏԱՐՈՒՄ ԱՄԲԻՈՆՆԵՐԻ ԾԱՆՐԱԲԵՌՆՎԱԾՈՒԹՅՈՒՆՆ ԸՍՏ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԻ

## ԸՆԴԱՄԵՆԸ՝ 175.5 դրույք



## ՊՐՈՖԵՍՈՐԱԴԱՍԱԽՈՍԱԿԱՆ ԿԱԶՄՆ ԸՍՏ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԻ
## 2013-2014 ՈՒՍՏԱՐԻ




2014-2015 ուսումնական տարում 2882 ուսանողական համակազմի համար կրթական ծառայություն իրականացվել է 246 դասախոսի կողմից՝ 152 129 ժամ ծանրաբեռնվածությամբ /175,5 դրույք/: 246 դասախոսներից 13-ը աշխատել են համատեղությամբ՝ իրականացնելով 7565 ժամ, իսկ 18 աշխատակիցներ աշխատել են ժամավճարային հիմունքներով՝ իրացնելով 2702 ժամ: Հաշվետու տարում դասախոս /1դրույք ծանրաբեռնվածությամբ/ - ուսանող հարաբերակցությունը 1/16 է:

# ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԶԱՐԳԱՑՈՒՄ

Բուհը ծավալում է ոչ միայն ուսումնական, այլև գիտականգործունեություն. Ընդ որում,ժամանակիհրամայականինհամահունչ՝ գործունեության հիմնական մասն է:

2014 թվականի ԳՊՄԻ-ի պրոֆեսորադասախոսական կազմի կողմից կատարված գիտահետազոտական աշխատանքների արդյունքներն ամփոփված են 157 գիտական հոդվածներներում և թեզիսներում, 11 մեթոդական աշխատանքներում և 3 մենագրություններում:

Հրատարակված աշխատանքները դասակարգված են ընդունված վարկանիշավորման սանդղակով.

ա) IMPACT FACTOR-ով միջազգային գիտական ամսագրերումտպագրված հոդված՝ 6

բ) ՌԴ ԲՈՀ-ի կողմից ճանաչվածգիտական ամսագրերում կամ ժողովածուներում տպագրված հոդված՝1

գ) ՀՀ ԲՈՀ-ի կողմից ճանաչված գիտական ամսագրերում կամ ժողովածուներում տպագրված հոդված՝ 79, որից 36-ը՝ ԳՊՄԻ-ի«Գիտական տեղեկագրում»

դ) Միջազգային գիտաժողովների ժողովածուներում տպագրված հոդված՝ 16

ե) Միջազգային գիտաժողովներում տպագրված թեզիս՝ 24

զ) Հանրապետական գիտաժողովների ժողովածուներում տպագրված հոդված՝ 14

է) Հանրապետական գիտաժողովների ժողովածուներում տպագրված թեզիս՝ 17

ը) Ուսումնական, մեթոդական ձեռնարկներ՝ 11

է) Գիտական մենագրություն՝ 3

# 2014 ԹՎԱԿԱՆԻ ՀՐԱՏԱՐԱԿՎԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԴԱՍԱԿԱՐԳՈՒՄԸ



# 2014 ԹՎԱԿԱՆԻՆ ՏՊԱԳՐՎԱԾ ԳԻՏԱՄԵԹՈԴԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ՝ ԸՍՏ ԱՄԲԻՈՆՆԵՐԻ



Բուհի հիմնադրման 80-ամյակի առթիվ հաշվետու տարում կազմակերպվեց հանրապետական գիտաժողով (հոկտեմբերի 28-29), որին մասնակցեցինհանրաժողովին մասնակցեցին հանրապետության տարբեր բուհերի և գիտական հաստատությունների 95 աշխատակիցներ:Հոբելյանական գիտաժողովին ներկայացված 80 հոդված տպագրվեց ԳՊՄԻ «Գիտական տեղեկագրում» (Ա պրակ՝ 30, իսկ Բ պրակ՝ 50 հոդված):

Հաշվետու տարում 12 աշխատակցի շնորհվել է դոցենտի գիտական կոչում, իսկ 5-ը պաշտպանեցին թեկնածուական ատենախոսություն:

ՀՀ ԿԳ Գիտության պետական կոմիտե կողմից սահմանված բարձր վարկանիշ ունեցող և բարձր արդյունավետությամբ աշխատող գիտնականների մրցույթի 100 շահառուներից մեկը արդեն քանիցս դառնում է մեր բուհի «Բարձրագույն մաթեմատիկա, մաթեմատիկա և նրա դասավանդման մեթոդիկա» ամբիոնի վարիչ, ակադեմիայի թղթակից անդամ Սամվել Սարգսյանը: Հաշվետու տարում բուհի վերոնշյալ ամբիոնում է իրականացվում է ՀՀ պետբյուջեի կողմից ֆինանսավորվող մեկ թեմա՝ «Միկրոպոլյար առաձգական բարակ ձողերի, սալերի, թաղանթների երկրաչափական ոչ գծային տեսություն»:

Հետազոտության ոլորտի խնդիրների վերհանման, վերլուծության և բարելավման արդյունավետության բարձրացման նպատակով հաշվետու տարում հիմնվեց աշխատակիցների գիտական աշխատանքների տվյալների բազա՝ էլեկտրոնային և թղթային տարբերակներով:

Հաշվետու տարում լրամշակվեց «Գիտահետազոտական և գիտամեթոդական աշխատանքները խթանելու կարգը»: Հաշվետու տարում կատարված աշխատանքների դիմաց աշխատակիցներին տրմադրվեց մոտ 4 միլիոն դրամ հավելավճար:

Հաշվետու տարում բուհի աշխատակիցները շանունակում են անդամակցել գիտական աստիճաններ շնորհող մասնագիտական խորհրդներին: Ինստիտուտի պրոֆեսորադասախոսական կազմի ներկայացուցիչները հանդես են գալիս որպես

դոկտորական և  թեկնածուական ատենախոսությունների ընդդիմախոսներ, իսկ բուհի ամբիոնները՝ որպես առաջատար կազմակերպություններ:

Գիտահետազոտական գործունեության կարևոր բաղադրիչներից մեկը բուհի ուսանողների մասնակցությունն է այդ աշխատանքների իրականացմանը: Լավագույնուսանողներնառաջինքայլերն են կատարում՝ մասնակցելով պետության տարբեր ուսանողական գիտական ընկերությունների կողմից կազմակերպված գիտաժողովներին:

Կարևորելով վերոնշյալ իրողությունը՝ ԳՊՄԻ հաշվետու տարում կազմակերպեց բուհի  հիմնադրման 80-ամյակին նվիրված համաինստիտուտային և հանրապետական ուսանողական գիտաժողովներ՝  հրատարակելով գիտական աշխատանքի պահանջները բավարարող նյութերը:

Չնայած կատարված աշխատանքներին և նշանակալի ձեռքբերումներին՝ ոլորտում առկա են խնդիրներ, որոնք իրենց հրատապությամբ բուհի ղեկավարության ռազմավարության առաջնահերթություններից են, ինչպես պրոֆեսորադասախոսական կազմի գիտական հաշվետվողականության բարձրացումը, ամբիոններում գիտական ուղղությունների ձևավորումը, կարճաժամկետ, միջնաժամկետ և երկարաժամկետ գիտական գործունեության ծրագրերի բացակայությունը: Առկա խնդիրների լուծման լուրջ գրավական է բուհի կողմից ֆինասական հատկացումները և համագործակցությունը այլ գիտական առաջատար հաստատությունների հետ:

Բուհի ուսանողները մեծ ակտիվություն են ցուցաբերում այս ոլորտում՝ մասնակցելով ուսանողական տարբեր գիտաժողովների: Հաշվետու տարում 111 ուսանողմասնակցելով գիտաժողովներիտպագրել են 94 հոդված:

# ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ ԲԱՇԽՎԱԾՈՒԹՅՈՒՆԸ՝ ԸՍՏ ՖԱԿՈՒԼՏԵՏՆԵՐԻ



# ԱՐՏԱՔԻՆ ԿԱՊԵՐ ԵՎ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ

Արտաքին կապերի զարգացումը, եվրոպական առաջատար բուհերի փորձի փոխանակումը, համագործակցության շրջանակների ընդլայնումը, ինչպես նաև միջազգայնացմանը նպաստող միջավայրի ստեղծումը ԳՊՄԻ-ի զարգացման ռազմավարական հայեցակարգում կարևոր տեղ են զբաղեցնում:

Նշված ուղղությամբ հաշվետու տարում իրականացվել են …. միջազգային ծրագրեր, որոնց նպատակներն ընդգրկում են այն հիմնարար ոլորտները, որոնք այսօր հռչակված են Բոլոնիայի գործընթացի գործողությունների գլխավոր ուղղություններ:

Բուհը մասնակցում է հետևյալ ծրագրերին

## I. ԵՎՐԱՄԻՈՒԹՅԱՆ "TEMPUS"-Ի "HEN-GEAR" ԾՐԱԳԻՐ /2012-2015թթ./

### Հայաստանում մարդկային կապիտալի գնահատման և շրջանավարտներին ուղղված բարձրագույն կրթության ցանց

Ազգային ծրագիրը կոորդինացվում է Բոլոնիայի AlmaLaurea գործակալության կողմից, որի շրջանակներում համագործակցում են հայաստանյան 12 և եվրոպական 4 գործընկեր կազմակերպություններ:

ՀԱՅԱՍՏԱՆՅԱՆ ԳՈՐԾԸՆԿԵՐՆԵՐ

1. ՀՀ կրթության և գիտության նախարարություն (Ministry of Education and Science of Armenia)
2. ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն (Ministry of Labour and Social Issues)

3. «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամ (National Centre for Professional Education Quality Assurance, Yerevan, Armenia)
4. Հայաստանի արդյունաբերողների և գործարարների (գործատուների) միություն (Union of Manufacturers and Bussinesses (Employers) of Armenia)
5. Հայաստանի ուսանողների ազգային ասոցիացիա (Armenian National students' Association )
6. Երևանի պետական համալսարան (Yerevan State University)
7. Երևանի գեղարվեստի պետական ակադեմիա (Yerevan State Academy of Fine Arts)
8. Հայաստանի պետական ճարտարագիտական համալսարան (State Engineering University of Armenia)
9. Գյումրու պետական մանկավարժական ինստիտուտ (Gyumri State Pedagogical Institut)
10. Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան (Armenian State University of Economics)
11. Հայաստանի ազգային ագրարային համալսարան (Armenian State Agrarian University)
12. Երևանի ճարտարապետության և շինարարության պետական համալսարան (Yerevan State University of Architecture and Construction)
13. Գավառի պետական համալսարան (Gavar State University)

## ԵՎՐՈՊԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԿԵՐՆԵՐ

1. Consorzio Interuniversitario AlmaLaurea, IT (Իտալիա)
2. Universidad de Huelva, ES (Իսպանիա)
3. Universidad de Las Palmas de Gran Canaria ES (Իսպանիա)

4. Universidade do Minho, PT (Պորտուգալիա)

Ծրագրի նպատակն է ստեղծել շրջանավարտների տվյալների բազա՝ հասանելի հայաստանյան և եվրոպական գործատուներին:

Հաշվետու տարում վերպատրաստված աշխատանքային թիմի կողմից իրականացվել են հետևյալ գործողությունները.

1. Երկլեզու հարցաշարերի մշակում՝ ուսանողի անձնական տվյալների և ուսումնառությունից բավարարվածության վերաբերյալ
2. Շրջանավարտների տվյալների բազայի հարթակի ստեղծում
3. Շրջանավարտների իրազեկում՝ բուկլետների, տեղեկագրքերի և տարաբնույթ հանդիպումների միջոցով
4. 2013-2014 ուստարվա շրջանավարտների ակադեմիական և անձնական տվյալների մուտքագրում բազա
5. Գործատուների մուտքի թույտվություն ԳՊՄԻ-ի տվյալների բազա

Մշակված մեթոդաբանության շնորհիվ բուհը կարող է մշտադիտարկել շրջանավարտների բավարարվածությունը մասնագիտության կրթական ծրագրերից, պրոֆեսորադասախոսական կազմի դասավանդման մեթոդներից, ենթակառուցվածքային ռեսուրսներից, տեղեկատվությունը ուսանողների հետագա զբաղվածության և կարիերայի վերաբերյալ:

Ստեղծված բազան հնարավորություն է ընձեռում գործատուներին իրենց պահանջներին համապատասխան շրջանավարտների անձնական և ակադեմիական տվյալների հասանելիության, ընտրության և կապի հաստատման հնարավորություն:

Ծրագրի շրջանակներում ձեռք բերվեց 10 000 եվրո արժողությամբ նյութատեխնիկական բազա:

Տեղադրվել և գործում են 4 սերվերներ, Dell ֆիրմայի ժամանակակից դյուրակիր համակարգիչ, 1 պրոյեկտոր, 1 կառավարվող D-Link ընկերության DES1210 մոդելի փոխանջատիչ: Վերնշյալ ռեսուրսները ունեն հետևյալ տեխնիկական բնութագրերը.

1. ProLiant E5-2609, Intel Xeon 2,4 GHz 4 CPU, 8GB RAM, 900 GB SDD hard drive
2. Proliant E5-2609, Intel Xeon 3 GHz 12 Core, 32 GB RAM, 1200 GB SDD hard drive
3. Supermicro Intel Xeon E5-2609 2,4 GHz 4 CPU, 8 GB RAM, 1TB SATA HDD
4. Dell i5 2,7 GHz, 4GB RAM, 500 GB SATA HDD
5. DES-1210 managable switch 10 Gigabit Ethernet, 2 SFP gigabit port

Ստացված նյութատեխնիկական ռեսուրսները կարգավորված են և կատարում են հետևյալ գործառույթները.

1. Բուհի ներքին փաստաթղթաշրջանառության համար նախատեսված տեղային ցանցի ապահովում,
2. Ներքին ցանցի համակարգիչների համար Ինտերնետ ծառայության մատուցում,
3. Դոմենային անվանումների ծառայության ապահովում,
4. Համակարգիչների IP հասցեների դինամիկ տրամադրում,
5. Յուրաքանչյուր համակարգչի ֆիզիկական և տրամաբանական հասցեների կապակցում,
6. Ներքին ցանցին անվտանգ միացման OpenVPN ծառայության մատուցում,
7. Ներքին ցանցի համակարգիչների համար հեռահար աշխատասեղանի և համակարգչին միացման ծառայության ապահովում,
8. Մասնագիտական կրթության կառավարման տեղեկատվական համակարգի աշխատանքի ապահովում ինչպես տեղային ցանցում, այնպես էլ հեռահար համակարգչից,

9. Սերվերներն ապահովում են վիրտուալ համակարգիչների տրամադրում, որի շնորհիվ ցանցում առկա են 10 վիրտուալ համակարգիչ,
10. Սերվերնեն ապահովում են ներքին փաստաթղթաշրջանառության տվյալների հենքի պահոց, որում կատարվում է տվյալների արխիվացում յուրաքանչյուր 3 օր պարբերականությամբ,
11. Սերվերները ծառայում են ԳՊՄԻ կայքի ամբողջ տվյալների արխիվացման պահոց, որը իրականացնում է ամբողջ կայքի արխիվացում յուրաքանչյուր շաբաթը մեկ պարբերականությամբ,
12. Սերվերները ծառայում են ԳՊՄԻ հաշվապահության համար նախատեսված Հայկական ծրագրերի հիմնական պահոց, որտեղ կատարվում է տվյալների արխիվացում յուրաքանչյուր 3 օրը մեկ պարբերականությամբ,
13. Կառավարվող D-Link DES 1210 փոխանջատիչը ծառայում է վիրտուալ տեղային ցանցի ապահովում ԳՊՄԻ ներքին ցանցում, ներկա դրությամբ ստեղծված են 2 վիրտուալ տեղային ցանցեր, որոնք նախատեսված են անվտանգ և արագագործ ցանցի ապահովման համար, վիրտուալ տեղային ցանցերից մեկը նախատեսված է ԳՊՄԻ-ի աշխատակիցների համար, իսկ երկրորդը՝ ուսանողների համար: Տեղային ցանցի իրական թողունակությունը կետից կետ կազմում է 98 Մբվ՝ ցանցի բեռնվածության բացակայության դեպքում, իսկ տեղային ցանցի առավելագույն բեռնվածության դեպքում՝ 60 Մբվ,
14. Սերվերները ապահովում են նաև Active Directory ծառայությունը, որը համակարգիչների օգտագործողների աշխատանքը դարձնում է առավել արդյունավետ և անվտանգ,
15. Գոյություն ունեցող սերվերները բավարար են ԲՈՒՀ-ի ամբողջ տեղեկատվական տեխնոլոգիաների նյութատեխնիկական աշխատանքը հաջորդ 3 տարիների ընթացքում ապահովման համար, ինչպես նաև ցանկացած SS նորամուծության կիրառման համար:

## II. ԵՎՐԱՄԻՈՒԹՅԱՆ "TEMPUS"-Ի "ARARAT" ԾՐԱԳԻՐ /2012-2015թթ/

### Հայկական համակարգման գործակալություն «համալսարան-գործատու»

Ծրագրի նպատակն է՝

1. մասնագիտական կրթական ծրագրերի համապատասխանեցումը աշխատաշուկայի պահանջներին,
2. որակավորումների սեկտորալ շրջանակների մշակում մանկավարժություն, տնտեսագիտություն և տեղեկատվական տեխնոլոգիաներ ոլորտներում:

Ծրագրի խնդիրներն են՝

1. բուհ-գործատու համագործակցության կենտրոնի ստեղծում,
2. գործատուների տվյալների բազայի ստեղծում,
3. մասնագիտության կրթական ծրագրերի տվյալների բազայի ստեղծում,
4. ծրագրերի համադրելիության և շարժունության ապահովում:

Ազգային այս ծրագրի շրջանակներում համագործակցում են հայաստանյան 14 և եվրոպական 6 գործընկերներ:

### ՀԱՅԱՍՏԱՆՅԱՆ ԳՈՐԾԸՆԿԵՐՆԵՐ

1. ՀՀ կրթության և գիտության նախարարություն (Ministry of Education and Science of Armenia)
2. ՀՀ էկոնոմիկայի նախարարություն (Ministry of Economy of Armenia)
3. Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն հիմնադրամ (National Centre for Professional Education Quality Assurance, Yerevan, Armenia)
4. Հայաստանի գործատուների հանրապետական միություն (Repuplic union of Employers of Armenia)

5. Հայաստանի բանկերի միություն (Union of banks of Armenia)
6. Հայաստանի ուսանողների ազգային ասոցիացիա (Armenian National students' Association )
7. Հայկական պետական մանկավարժական համալսարան (Armenian State Pedagogical University)
8. Ռուս-Հայկական (Սլավոնական) համալսարան (Russian-Armenian (Slavonic) University)
9. Հայաստանի պետական ճարտարագիտական համալսարան (State Engineering University of Armenia)
10. Հայաստանի պետական ճարտարագիտական համալսարանի Վանաձորի մասնաճյուղ (Vanadzor Branch of State Engineering University of Armenia)
11. Գյումրու պետական մանկավարժական ինստիտուտ (Gyumri State Pedagogical Institute)
12. Գավառի պետական համալսարան (Gavar State University)
13. Գորիսի պետական համալսարան (Goris State University)
14. Սինոպսիս (Synopsys of Armenia)

## ԵՎՐՈՊԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԿԵՐՆԵՐ

1. Կոբլենց-Լանդաու համալսարան, Գերմանիա (Universitat Koblenz-Landau, DE)
2. Հետազոտությունների և նախաձեռնությունների Եվրոպական կենտրոն,Իտալիա(European Centre of Studies and Initiatives, IT)
3. Ինֆորմացիոն համակարգերի կառավարման ինստիտուտ, Լատվիա (Information Systems Management Institute, LV)
4. Համաշխարհային համալսարանական ծառայություն – Ավստրիական հանձնաժողով, Ավստրա (World University Service - Austrian Committee, AT)

5. Ալիկանտեի համալսարան, Իսպանիա (University of Alicante, ES)
6. Մարիա Կյուրի-Սկլադովսկայայի համալսարան, Լեհաստան (Universitet Marii Currie-Sklodowskiej, PL)

**Հաշվետու տարում կատարվել են հետևյալ աշխատանքները**

1. Ստեղծվեց բուհ-գործատու համագործակցության կենտրոն
2. Մշակվեցին 4 տարաբնույթ (ուսանողների, դասախոսների, շրջանավարտների, գործատուների համար) հարցաթերթիկներ աշխատաշուկայի կարիքների վերաբերյալ
3. Փործարկվեցին հարցաթերթերը երեք ոլորտի համար՝ տեղեկատվական տեխնոլոգիաներ, կրթություն, տնտեսագիտություն
4. Ստեղծվեց տվյալների բազայի հարթակը կրթական կարիքների առցանց գնահատման նպատակով
5. Մշակվեց տվյալների մուտքագրման մեթոդաբանություն
6. Մշակվեց ՄԿԾ-ների կարիքների վեր հանման մեթոդաբանություն

Ծրագրի շրջանակում կենտրոնը համալրվեց 8000 եվրո արժողությամբ նյութատեխնիկական բազայով:

Ծրագրի շրջանակում աշխատաշուկայի պահանջներին համապատասխան կմշակվեն նշված երեք ոլորտների որակավորումների սեկտորալ շրջանակը՝ հանդիսանալով ելակետ մասնագիտության կրթական ծրագրերի վերջնարդյունքների համար: Ծրագրի վերջնարդյունքում կունենաք տվյալների բազա, որտեղ գործատուներին հասանելի տեղադրված կլինեն բուհի բոլոր

մասնագիտական կրթական ծրագրերը իրենց վերջնարդյունքներով, իսկ գործատուների կողմից կտեղադրվեն իրենց կազմակերպություններում առկա պաշտոնների նկարագրերը:

## III. ԵՎՐԱՄԻՈՒԹՅԱՆ "TEMPUS"-Ի "SuToMa" ԾՐԱԳԻՐ /2012-2015թթ./

## ԿԱՅՈՒՆ ՏՈՒՐԻԶՄԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ ԲԱԿԱԼԱՎՐԻ ԵՎ ՄԱԳԻՍՏՐՈՍԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱՐ ՆՈՐ ՄՈԴՈՒԼՆԵՐԻ ՄՇԱԿՈՒՄ /2012-2015թթ./

**Ծրագրի նպատակն է.**

1. բակալավրի և մագիստրոսի մասնագիտական կրթական ծրագրերի մշակում վերջնարդյունքներով, որն ընդունելի է եվրոպական համակարգում,
2. վերջնարդյունքներին համապատասխան դասագրքերի կազմում,
3. էլեկտրոնային (elearning) ուսուցման հարթակի ստեղծում,

Ծրագիրը համակարգվում է Գերմանիայի կիրառական գիտությունների Յադեի համալսարանի կողմից,

Ծրագիրը տարածաշրջանային է, որին մասնակցում են հայաստանյան 8 և 21 արտասահմանյան գործընկերներ:

### ՀԱՅԱՍՏԱՆՅԱՆ ԳՈՐԾԸՆԿԵՐՆԵՐ

1. ՀՀ էկոնոմիկայի նախարարություն (Ministry of Economy of Armenia)
2. Երևանի պետական համալսարան (Yerevan State University)
3. Հայաստանի ազգային ագրարային համալսարան (Armenian State Agrarian University)
4. Ռուս-Հայկական (Սլավոնական) համալսարան (Russian-Armenian (Slavonic) University)

5. Երևանի պետական լեզվաբանական համալսարան (Yerevan State Linguistic University)
6. Գյումրու պետական մանկավարժական ինստիտուտ (Gyumri State Pedagogical Institute)
7. Բեռլինի Հյուրերի տուն ՍՊԸ (Berlin Guesthouse ltd)
8. Հյուր Սերվիս (Hyur Service)

## ԱՐՏԱՍԱՀՄԱՆՅԱՆ ԳՈՐԾԸՆԿԵՐՆԵՐ

1. Ուորմսի կիրառական գիտությունների համալսարան, Գերմանիա (Worms University of Applied Sciences, DE)
2. Բարձրագույն կրթության CHE կենտրոն, Գերմանիա (CHE Consult GmbH, DE)
3. Ռեզեկնեսի համալսարան, Լատվիա (Rezeknes Augstskola, LV)
4. Թրալիի տեխնոլոգիայի ինստիտուտ, Իռլանդիա (Institute of Technology Tralee, IE)
5. Թելավիի Յակով Գոգեբաշվիլիի անվան պետական համալսարան, Վրաստան (Iakob Gogebashvili Telavi State University, GE)
6. Շոտա Ռուստավելիի անվան պետական համալսարան, Վրաստան (Shota Rustaveli State University, GE)
7. Իլիայի պետական համալսարան, Վրաստան (Ilia State University, GE)
8. Ագրարային համալսարան, Վրաստան (Agricultural University of Georgia, GE)
9. Բնապահպանության անդրսահմանային միացյալ քարտուղարություն, Վրաստան (Transboundary Joint Secretariat for Nature Conservation)
10. Կովկասյան տարածաշրջանային բնապահպանության կենտրոն, Վրաստան (The Regional Environmental Centre for the Caucasus)
11. Արագվի արկածների կենտրոնՍՊԸ, Վրաստան (Aragvi Adventure Centre Ltd.)

12. Ադրբեջանի Զբոսաշրջության համալսարան (Azerbaijan Tourism Institute)
13. Մինգաչեվիրի զբոսաշրջության ինստիտուտ, Ադրբեջան (Mingachevir Tourism College, AZ)
14. Նախիջևանի պետական համալսարան, Ադրբեջան (Nakhchivan State University, AZ)
15. Ադրբեջանի պետական ագրարային համալսարան (Azerbaijan State Agricultural University)
16. Բաքվի պետական համալսարան, Ադրբեջան (Baku State University, AZ)
17. Բաքվի Զբոսաշրջության տեղեկատվական կենտրոն, Ադրբեջան (Baku Tourism Information Centre, AZ)
18. Բնության ընկերներ ՀԿ, Ադրբեջան (Nature Friends NGYO, AZ)
19. Ադրբեջանական զբոսաշրջության ասոցիացիա (Azerbaijan Tourism Association)
20. «Էկոսֆերա» սոցիալ-տնտեսական կենտրոն, Ադրբեջան ("EkoSfera" Social-Ecology Centre, AZ)
21. Հազարամյակի զբոսաշրջություն և կոնգրես ՍՊԸ, Ադրբեջան (Millennium Tourism & Congress DMC LLC, AZ)

### Հաշվետու տարում կատարված աշխատանքները

1. Ուսումնասիրվեցին 12 դասընթաց (մոդուլ)
    - Զբոսաշրջային ուղղությունների կառավարում
    - Կայուն տուրիզմ
    - Էկոտուրիզմ
    - Ագրոտուրիզմ
    - Պրակտիկայի կառավարում
    - Զբոսավարություն

- Կարողությունների զարգացումը կայուն տուրիզմի համար
- Միջմշակութային հաղորդակցում և կառավարում
- Լեզուն հատուկ նպատակներով՝ տուրիզմ
- Նորարար փոքր և միջին ձեռնարկությունները կայուն տուրիզմում
- Մշակութային ժառանգության կառավարում
- Էլեկտրոնային ուսուցում

2. Մշակվեց յուրաքանչյուր մոդուլի վերջնարդյունքը
3. Կազմվեցին և հրատարակվեցին դասագրքեր՝ ըստ մոդուլների
4. Մշակվեց պրակտիկայի կազմակերպման մեթոդաբանություն
5. Կազմակերպվեց աշխատաժողովներ գործատուների հետ
6. Կազմակերպվեց վերապատրաստում դասավանդման մեթոդների ուղղությամբ

Ծրագրի վերջնարդյունքում վերոնշյալ որոշ մոդուլներ կըդգրկվեն «Տուրիզ» և «Կառավարում» մասնագիտությունների կրթական ծրագրերում:

## IV. ERASMUS MUNDUS PROGRAMME -"INFINITY" ՇԱՐԺՈՒՆՈՒԹՅԱՆ ԾՐԱԳԻՐ /2013-2016թթ./

**Ծրագրի նպատակն է** ուսանողների և աշխատակազմի շարժունության իրականացումը:

"INFINITY" –ն Եվրամիության կողմից ուսանողների և աշխատակազմի շարժունության նախագիծ է, որը իր գործունեությունը ծավալվում էհետևյալ բնագավառներում՝

- գյուղատնտեսական գիտություններ,
- ճարտարապետություն, քաղաքային և  տարածաշրջանային պլանավորում,
- բիզնես, մենեջմենթ,
- ինժեներություն, տեխնոլոգիա,
- աշխարհագրություն, երկրաբանություն,
- բնական գիտություններ,
- սոցիալական գիտություններ:

## ՀԱՅԱՍՏԱՆՅԱՆ ԳՈՐԾԸՆԿԵՐՆԵՐ

1. Գյումրու պետական մանկավարժական ինստիտուտ (Gyumri State Pedagogical Institute)
2. Երևանի ճարտարապետության և շինարարության պետական համալսարան (Yerevan State University of Architecture andConstruction)

## ԱՐՏԱՍԱՀՄԱՆՅԱՆ ԳՈՐԾԸՆԿԵՐՆԵՐ

1. Լիսաբոնի համալսարան, ճարտարապետության ֆակուլտետ, Պորտուգալիա` համակարգող (Faculty of Architecture, University of Lisbon, PT - Coordination Institution)
2. Դոնբասի քաղաքացիական ճարտարագիտության և ճարտարապետության ազգային ակադեմիա, Ուկրաինա` համահամակարգող համալսարան (Donbas National Academy of Civil Engineering and Architecture, UKR-Joint-Coordination Institution)

3. Դոնեցկի Մարդու իրավունքների ուսանողնական ասոցիացիա, Ուկրաինա՝ օժանդակող գործընկեր (Donetsk students association of human rights lawyers, UKR- Associated partner)
4. Օստրավայի տեխնիկական համալսարան, Չեխիա (Technical University of Ostrava, CZ)
5. Կյանքի մասին գիտության համալսարան, Էստոնիա (Estonian University of Life Science, EE)
6. Լերիայի պոլիտեխնիկական ինստիտուտ, Պորտուգալիա (Polytechnic Institute of Leiria, PT)
7. Նովա Գորիցայի համալսարան, Սլովենիա (University of Nova Gorica,SL)
8. Բելառուս-Ռուսական համալսարան, Բելառուսիա (Belarussian-Russian University,BY)
9. Բելառուսիայի պետական տեխնոլոգիական համալսարան (Belarusian State Technological University)
10. Վրաստանի գյուղատնտեսական համալսարան (Agriculture University of Georgia)
11. Վրաստանի տեխնիկական համալսարան (Georgian Technical University)
12. Մոլդովայի պետական ագրարային համալսարան (State Agrarian University of Moldova)
13. Մոլդովայի տեխնիկական համալսարան (Technical University of Moldova)
14. Դոնեցկի ազգային տեխնիկական համալսարան, Ուկրաինա (Donetsk National Technical University,UKR)
15. Բեկետովի անվան քաղաքային տնտեսության ազգային համալսարան, Ուկրաինա (O.M. Beketov National University of Urban Economy,UKR)
16. Խարկովի քաղաքացիական ճարտարագիտության և ճարտարապետության ազգային համալսարան, Ուկրաինա (Kharkiv National University of Civil Engineering and Architecture, UKR)

17. Լվովի ազգային պոլիտեխնիկական համալսարան, ճարտարապետության ֆակուլտետ (Lviv Polytechnic National University, Architectural Department,UKR)
18. Ադրբեջանի պետական գյուղատնտեսական համալսարան (Azerbaijan State Agricultural University)
19. Մինգաչևիրի անվան պոլիտեխնիկական ինստիտուտ, Ադրբեջան (Mingachevir Polytechnical Institute,AZ)

Հաշվետու տարում ծրագրի շրջանակներում Եվրոպական բուհերում (Պորտուգալիայի Լեիրիայի համալսարան, Սլովենիայի Նովա Գորիցայի համալսարան, Պորտուգալիայի Լիսաբոնի համալսարան) ուսումնառությունը շարունակում են երեք ուսանող մագիստրոսի և մեկ դասախոս՝ հետազոտողի կրթական ծրագրով: 2015-2016 ուսումնական տարում ծրագրի շրջանակում Եվոպական բուհերում ուսումնառությունը կշարունակեն ևս 2 բակալավրի, մեկ հետազոտողի, մեկ հետդոկտրանտուրայի կրթական ծրագրերով ուսումնառողներ և աշխատակազմի երկու ներկայացուցիչ: Բուհը պատրաստվում է ընդունել գործընկեր համալսարանների ուսումնառողների և աշխատակազմի ներկայացուցիչներ:

## V. ԵՎՐԱՄԻՈՒԹՅԱՆ "TEMPUS"-Ի "ARMENQA" ԾՐԱԳԻՐ /2013-2016թթ./- Որակավորումների ազգային շրջանակի և կրթական ծրագրերի համադրելիություն

Ծրագրի նպատակն է՝

1. որակավորումների ազգային շրջանակի և կրթական ծրագրերի համադրելիություն,
2. շարժունության իրականուցում:

Ծրագրի խնդիրներն են՝

1. որակավորումների ազգային շրջանակի իրականացում մշակված մեթոդաբանության, կանոնակարգային, ենթաօրենսդրական բազաների ստեղծման օգնությամբ,
2. պրոֆեսորադասախոսական կազմի կարողությունների զարգացում կրթական,
3. ազգային սեկտորալ շրջանակների մշակում /«Իրավագիտություն», «Ֆիզիկա», «Կրթություն», «Ճարտարագիտություն», «Գյուղատնտեսություն»/,
4. ուսումնական ծրագրերը վերջնարդյունքներով ներկայացնելու մեթոդաբանության ստեղծում:

Հաշվետու տարում կատարվել են հետևյալ աշխատանքները

ա) մշակվեց և ներկայացվեց որակավորումների ազգային շրջանակը

բ) որակավորումների ազգային շրջանակին համապատասխան կրթական ծրագրերի մշակման հմտություններով օժտված աշխատախումբ

Հաշավետու տարում ավարտվեցին երկու ծրագրեր՝

1. Եվրամիության "TEMPUS"-Ի "PICQA" ծրագիրը /2010-2014թթ./, որի արդյունքում ստեղծվեց որակի ապահովման ներքին համակարգ և բուհի գործունեության շարունակական բարելավման հստակ մեխանիզմներ:
2. Համաշխարհային բանկի կողմից ֆինանսավորվող «Կրթության որակ և համապատասխանություն» /2012-2014թթ./ ծրագիրը, որի արդյունքում ապակենտրոնացվեց որակի ապահովման համակարգը և ինստիտուտի ենթակառուցվածքային հավատարմագրման համար անհրաժեշտ արդյունավետ գործիքակազմ:

Վերոնշյալ ծրագրերի միջոցով որակի ապահովման կառույցները ապահովվեցին անհրաժեշտ նյութատեխնիկական բազայով:

Բուհը կարևորելով համագործակցությունը դպրոցների հետ հաշվետու տարում կազմակերպել է դպրոցականների հանրապետական առարկայական օլիմպիադաներ «Մաթեմատիկա», «Ֆիզիկա», «Ինֆորմատիկա», «Քիմիա», «Կենսաբանություն», «Աշխարհագրություն», «Հայոց լեզու և գրականություն», «Ռուսաց լեզու», «Անգլերեն», «Ֆրանսերեն» և «Պատմություն» առարկաների ուղղությամբ: Մասնակից աշակերտների թիվը գերազանցել է 1050-ը: Օլիմպադայի հաղթողներին հանդիսավոր պայմաններում հանձնվեցին դիպլոմներ, գովասանագրեր և համապատասխան մրցանակներ:

## IV. ՀԱՍԱՐԱԿԱՅՆՈՒԹՅԱՆ ՀԵՏ ԿԱՊԵՐ ԵՎ ԼՐԱՏՎՈՒԹՅՈՒՆ

Կարևորելով իր տրամադրած կրթական, գիտական և այլ ծառայությունների համար պետության և հասարակության առջև հաշվետվողականությունը, ինչպես նաև իր գործունեության մասին տեղեկատվության հասանելիության և թափանցիկության ապահովումը՝ հաշվետու տարում լուրջ աշխատանքներ են ծավալվել **հասարակայնության հետ կապերի և լրատվության բաժինի կողմից:** Բաժնի հիմնական խնդիրն է բուհի գործունեության մասին տեղեկատվության տարածումը հասարակության լայն շրջաններում, դրական հասարակական կարծիքի և բարձր վարկանիշի ձևավորման ուղղությամբ իրականացվող աշխատանքների կազմակերպումը:

Հասարակայնության հետ կապերի և լրատվության բաժինը հագեցված է ժամանակակից տեխնիկայով, ունի նկարահանման ժամանակակից տաղավար և ստուդիա:

Հաշվետու տարում հասարակայնության հետ կապերի ու լրատվության բաժնի աշխատանքներն ընթացել են ներքին և արտաքին հաղորդակցության, ԳՊՄԻ-ին վերաբերող հրապարակումների վերլուծության, բուհի վարկանիշի բարձրացման,

ամենշաբաթյա սեփական հեռուստածրագրի պատրաստման և հեռարձակման, կրթական տեղեկատվական ամսագրի /ԳՊՄԻ info/ ամենամսյա հրատարակման, համացանցային տիրույթում ԳՊՄԻ-ի վերաբերյալ տեղեկատվության և տեսանյութերի տարածման, ինչպես նաև լրագրության բաժնի ուսանողների մասնագիտական-գործնական հմտությունների ուսուցման և մի շարք այլ ուղղություններով:

Բուհի վերաբերյալ հասարակական կարծիքի ուսումնասիրության և վերլուծության նպատակով իրականացվել են սոցհարցումներ բուհի ներսում և հասարակության լայն շրջաններում: Սոցհարցումների վերլուծության հիման վրա պատրաստվել և «ԳՊՄԻ լրագիր» հաղորդաշարի շրջանակներում հեռարձակվել են հասարակության մեջ բուհի վարկանիշի բարձրացմանը նպաստող տեսանյութեր: Կազմակերպվել և հեռարձակվել են բանավեճ-քննարկումներ բուհի ղեկավարության և ուսանողների միջև, վերհանվել են ուսանողներին հուզող խնդիրները, և բուհի ղեկավարության կողմից տրվել են համապատասխան մեկնաբանություններ, լուծումներ:

Իրականացվել է լրատվամիջոցներում ինստիտուտի ընդհանուր գործունեությանը վերաբերվող հրապարակումների ու հեռարձակված նյութերի հավաքագրում, ուսումնասիրություն և վերլուծություն: Ուսումնասիրվել է տարբեր՝ հեռուստատեսային, տպագիր և էլեկտրոնային լրատվամիջոցների լուսաբանումները բուհի գործունեության, ինչպես նաև բուհի աշխատակիցների գործունեության վերաբերյալ: Ուսումնասիրված շուրջ 120 նյութի 30 %-ն են կազմում հեռուստատեսային թողարկումները, որոնք մեծամասամբ վերաբերում են բուհի գիտակրթական, մշակութային անցուդարձին և բուհում իրականացվող կարևոր միջոցառումներին: Բուհի մասին լրահոսի մոտ 70% -ը կազմում են տպագիր ու էլեկտրոնային հրապարակումները /որտեղ զգալի է նաև ապատեղեկատվությունը/ և վերաբերում են ԳՊՄԻ-ի դասախոսներին ու ղեկավարությանը: Ի պատասխան որոշ լրատվամիջոցների ապատեղեկատվության՝ պատրաստվել և հեռարձակվել են տեսանյութեր ու էլեկտրոնային հոդվածներ: ԳՊՄԻ-

ի մշակութային, սոցիալական ու գիտակրթական գործունեությունը, անցուղարձը, ոլորտի բարեփոխումներն ու այդ ուղղությամբ իրականացվող ծրագրերը հասարակությանը հասանելի են դարձել հիմնականում «Առաջին ստուդիայի» պատրաստած «ԳՊՄԻ լրագիր» հաղորդաշարի միջոցով: Հաղորդաշարի շրջաններում պատրաստվել և հեռարձակվել են դիմանկարային տեսանյութեր, ժամանցային, ինչպես նաև երիտասարդներին հուզող խնդիրները բարձրաձայնող տեսանյութեր, պարբերաբար անդրադարձ է կատարվել նաև բուհի հենակետային ավագ դպրոցի և միջին մասնագիտական բաժնի աշխատանքներին ու իրականացրած միջոցառումներին:

Հաշվետու ժամանակաշրջանում «ԳՊՄԻ լրագիրն» ունեցել է շուրջ 50 թողարկում՝ յուրաքանչյուր թողարկման ընթացքում ներկայացնելով միջինը 4 տեսանյութ:

Հասարակայնության կապերի և լրատվության բաժնի շնորհիվ լրագրության բաժնի ուսանողների գործնական պարապմունքները հիմնականում կազմակերպվել են ստուդիայում:

2012 թ.-ից ինստիտուտի անցուղարձի մասին իրազեկող, ինչպես և երիտասարդությանը հուզող հարցեր արծարծող տեսանյութերն արդեն համացանցում են՝ www.gpmistudio.blogspot.com տիրույթում: ԳՊՄԻ-ի բլոգը հնարավորություն է տալիս բոլոր նախաձեռնող ուսանողներինին ակտիվ քննարկումներից բացի, ստուդիայի օժանդակությամբ կյանքի կոչել բոլոր լավ գաղափարները:

Հաշվետու ժամանակաշրջանում հրատարակվեց բուհի կրթական տեղեկատվական ամսագիրի՝ «ԳՊՄԻ info», 12 համարներ: Ամսագրի համարներում ենթաբաժիններով ներկայացվում են ԳՊՄԻ բարեփոխումների գործընթացները, պատմությունը /շարունակաբար/, գիտական կյանքը, եվրոպական կրթական համակարգին ինտեգրվելու նոր պահանջները, ուսանողների իրավունքներն ու պարտականությունները, բուհի նոր բաժինների մասին պատմող նյութեր, ուսանողական կյանքի մասին պատմող

կամ դիմանկարային նյութեր, իրադարձային նյութեր, ստեղծագործում են մանկավարժականցիները, մեր գործընկերները, հայտարարությունների անկյուն/կրթական/ և այլն: Բաժինը համագործակցում է նաև Գյումրու «Զբաղվածության պետական ծառայություն» գործակալության հետ: «ԳՊՄԻ info»-ի միջոցով տեղեկատվություն է տրամադրվում մարզի թափուր աշխատատեղերի մասին: Ամսագիրը հրատարակվում է 200 տպաքանակով:

Հասարակայնության հետ կապերի և լրատվության բաժինի աշխատակիցների կողմից քննարկվում և կարիքներին համապատասխան լրամշակվում է բուհի կայքը՝ www.gspi.am:

# V. ԳԻՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ

Հաշվետու տարում գիտական գրադարանը իր աշխատանքային գործունեությունը ծավալել է բուհական գրադարանների գործունեությանը համապատասխան՝ հաշվի առնելով գրադարանային գործի բարելավման և գրադարանային տեղեկատու ոլորտը ժամանակակից պահանջներին համապատասխանեցնելու մասին կառավարության որոշումները:

2014թ. գրադարանի ընթերցողների հաճախումների թիվը կազմել 42 550 մարդ, իսկ նույն ժամանակահատվածում գրադարանի գրքատացքը՝51 530 միավոր գրականություն: Գրադարանից օգտվողների բաժանորդների թիվաքանակը 1705 է, որից բակալավրի առկա կրթական ծրագրով ՝ 699, հեռակա՝ 563, մագիստրոսի՝123, հետազոտողի՝ 31 ուսանող, 214 դասախոս և 75 այլ աշխատակիցներ: Հաշվետու տարում գրադարանում գրանցված և նրա ծառայություններից օգտվող ուսանողների ընդհանուր թիվաքանակը 1376 է: Մեծ է նաև գրադարանի ընթերցասրահից օգտվողների թիվաքանակը՝3466 բաժանորդ, որոնցից 2 989՝ ուսանող, 477՝դասախոս և այլ աշխատակիցներ:

Հաշվետու տարում գրադարանի գրքային ֆոնդը կազմում է 137 175 միավոր՝ բուհական դասագրքեր, ուսումնական ձեռնարկներ, մեթոդական-տեղեկատվական գրքեր, և առկա է անընդհատ աճի միտում: Գրքային ֆոնդի հարստացման համար ծախսվել է 2 միլիոն 228 888 դրամ և ձեռք է բերվել 1986 միավոր մասնագիտական և գեղարվեստական գրականություն. մասնավորապես՝ մասնագիտական դասագրքեր՝ 219, ուսումնական ձեռնարկներ՝ 413, գեղարվեստական գրականություն՝ 995, այլ նյութեր՝ 359 միավոր: Գրադարանը համալրվել է նաև բուհի դասախոսների ուսումնամեթոդական ձեռնարկներով: Գրադանային ֆոնդի համալրում կատարվել է նաև նվիրատվությունների շնորհիվ, ինչպես նաև բաժանորդագրությունների արդյունքում: Հաշվետու տարում գրադարանին նվիրատվության կարգով տրամադրվել է հայերեն և ռուսերեն 764 միավոր գրականություն: Ընդլայնվել է նաև տեղեկատվական ծավալները, մասնավորապես գիտական հանդեսների, ամսագրերի ձեռք բերումը:

Հաշվետու տարում կատարվել է գրքային ֆոնդի համալրման, մշակման, մասնագիտական գրականության ստուգման, մաքրման, տեղաշարժի, գրքերի վերանորոգման ու պահպանման աշխատանքներ: Իրականացվել է նաև մասնագիտական գրականության վերադասավորում և համակարգում, շարունակվել է գրքային ֆոնդի համակարգչային մուտքագրումը, նկարագրումը և դասակարգումը՝ ըստ գրադարանային մատենագիտական դասակարգումների: Կատարվել է 11 582 միավոր գրականության համակարգչային մուտքագրում՝ բարելավվելով 25 մասնագիտական կրթական ծրագրերի պահանջներին համապատասխան մասնագիտական և գեղարվեստական գրականություն: Մասնագիտական գրականություն առկա է նաև ամբիոններում. ընդհանուր թիվով՝ 3 620 միավոր: Ընթերցասրահում հասանելի է մասնագիտական գրականության որոշակի բազա՝ էլեկտրոնային տարբերակով, ինչպես նաև իրականացվող մասնագիտական կրթական ծրագրերի դասընթացների էլեկտրոնային դասախոսությունների փաթեթները. ընդհանուր թիվով՝289:

Գիտական գրադարանը գիտաուսումնական պահանջների բավարարման նպատակով գրքային պաշարից բացի

կարևորում է նաև էլեկտրոնային տեղեկատվական ռեսուրսների նպատակային օգտագործումը և իր գործունեության առաջնահերթություններից է համարում էլեկտրոնային գրադարանի ստեղծումը:

Իր շահառուների հետ հետադարձ կապի ապահովումը կարևորելով՝ գրադարանի աշխատակիցները օգտագործում են ԳՊՄԻ-ի կայք էջի «Գրադարան» բաժնի հնարավորությունները, որից ընթերցողներին տեղեկացվում է նաև ստացված նոր գրականության յուրաքանչյուր խմբաքանակի մասին:

ԳՊՄԻ-ի գիտական գրադարանը համագործակցում է ՀՀ Ազգային գրադարանի, ԵՊՀ-ի գրադարանի, Շիրակի մարզային գրադարանի, Նորամուծության և ձեռներեցության ազգային կենտրոնի և այլ գրադարանների հետ:

# VI. ՈՐԱԿԻ ՆԵՐՔԻՆ ԱՊԱՀՈՎՈՒՄ

Որակյալ կրթության և հանրային ծառայությունների իրականացումը ԳՊՄԻ–ի հիմնական ռազմավարական նպատակներից է, որին հասնելու բանալին որակի ապահովման ներքին գործուն համակարգի ստեղծումն էր: Այս խնդրի հստակ գիտակցումն էլ խթան հանդիսացավ ԳՊՄԻ-ում որակի ապահովման կենտրոնի (ՈԱԿ) հիմնադրման համար, որի նպատակն է ապահովել ուսումնական, գիտահետազոտական և կառավարման գործընթացների որակի վերահսկումը, հաշվետվողականությունը և շարունակական բարելավումը՝ ի պատասխան բուհի առջև ծառացած մարտահրավերներին: Կենտրոնի խնդիրներն են խթանել բուհում որակի ապահովման մշակույթի ձևավորումը և արմատավորումը, ինչպես նաև ստեղծել որակի ապահովման, մշտադիտարկման և բարելավման գործիքակազմ: Հաշվետու տարում մասնավորապես այս կառույցի հիմնական խնդիրն էր

իրականացնել ինստիտուցիոնալ ինքնագնահատում և վերլուծություն՝ ապահովելով բուհի հաշվետվողականությունը ներքին և արտաքին շահակիցների առջև:

2014 հաշվետու տարում որակի ապահովման կանոնակարգային, ընթացակարգային միասնական հենքի ստեղծման նպատակով լրամշակվել են ՈԱ գործընթացների իրականացման համար անհրաժեշտ հետևյալ կանոնակարգերը՝ «ԳՊՄԻ-ի որակի ապահովման քաղաքականությունը» և «ԳՊՄԻ-ի որակի ապահովման կենտրոնի կանոնակարգը»: Համաձայն այս փաստաթղթերի՝ կանոնակարգվում են ՈԱԿ-ի գործունեությունը, հստակեցվում են կրթության և որակի կառավարիչների գործառույթները՝ որակի մշակույթի ձևավորման համար հիմքեր ստեղծելով:

Հաշվետու տարում կենտրոնն աշխատանքներն իրականացրել է հետևյալ ուղղություններով.

1.կազմակերպչական գործունեություն՝ կրթության որակի ապահովման և մշտադիտարկման գործընթացների կազմակերպում
,

2.վերլուծական գործունեություն՝ ինստիտուտում որակի ապահովման համակարգի արդյունավետության բարձրացում,

3.մեթոդական գործունեություն՝ կրթության որակի ապահովման ոլորտում պրոֆեսորադասախոսական կազմի և ֆակուլտետային պատասխանատուների (12 աշխատակիցների) վերապատրաստում ՈԱԱԿ-ի եռափուլ ծրագրով և ՈԱ *աջակիցների* կարգավիճակի ձեռք բերում,

4.համակարգող գործունեություն՝ կրթական որակի ապահովման գործընթացի մասնակիցների աշխատանքային խմբերի ձևավորում և դրանց աշխատանքի համակարգում,

5.խորհրդատվական գործունեություն՝ որակի ապահովման վերաբերյալ խորհրդատվության տրամադրում ամբիոնների պատասխանատուների միջոցով:

Հաշվետու տարում որակական փոփոխության է ենթարկվել ՈԱԿ-ի կառուցվածքն ու կառավարումը: Որակի ապահովման ֆակուլտետային պատասխանատուների գործառույթների հստակեցում կատարելով՝ բուհի ղեկավարության կողմից իրականացվել է հաստիքային տարբերակում: Որակի ապահովման գործընթացներում կառուցվածքային ստորաբաժանումների ներգրավվածությունն ապահովելու նպատակով ՈԱԿ-ի աշխատանքներին մասնակցում են ամբիոնների պատասխանատուները, ինչպես նաև ուսանողների ներգրավվածությունն  ապահովելու նպատակով՝ Ուսանողական խորհրդի կողմից ներկայացված մշտական և ժամանակավոր ուսանողական խմբերը և առանձին ամբիոնների կողմից ներկայացված մասնագիտական կրթական տարբեր  ծրագրերով սովորող ուսանողները: Ընդ որում, ՈԱԿ-ի աշխատանքներին ակտիվ մասնակցություն ունեցած ուսանողների խրախուսման մեխանիզմներ են կիրառվել:  Այսօր ԳՊՄԻ-ի ՈԱ ներքին համակարգը ապակենտրոնացված է և ունի հետևյալ պատկերը.


Խորհուրդ
Ռեկտորատ
Ռեկտոր
Գիտխորհուրդ
Որակի ապահովման կենտրոն
ՈԱ ֆակուլտետային կենտրոն
Ֆիզմաթ ֆակուլտետ
ՈԱ ֆակուլտետային կենտրոն
Բնագիտաաշխարհա-գրական ֆակուլտետ
ՈԱ ֆակուլտետային կենտրոն
Օտար լեզուներ ֆակուլտետ
ՈԱ ֆակուլտետային կենտրոն
Մանկավարժության ֆակուլտետ
ՈԱ ֆակուլտետային կենտրոն
Պատմաբանասիրական ֆակուլտետ
ՈԱ ֆակուլտետային կենտրոն
Ֆիզդաստիարակության և ՆԶՊ ֆակուլտետ
ՈՒԽ-ի ՈԱ խումբ
Ամբիոնների պատասխանատուներ….

Հաշվետու տարում ՌԱԿ իրականացրել են հետևյալ աշխատանքները՝

1. Ինստիտուցիոնալ (կառուցվածքային) ինքնավերլուծության իրականացում,
2. ԳՊՄԻ ուսանողների կողմից պրոֆեսորադասախոսական կազմի մանկավարժական և մասնագիտական որակների գնահատման հարցումների կազմակերպում և արդյունքների վերլուծություն,
3. ԳՊՄԻ վարչական կառույցների գործունեության արդյունավետության գնահատման վերաբերյալ հարցաթերթիկների մշակում, հարցումների իրականացում և վերլուծություն,
4. ԳՊՄԻ-ի ուսանողների կողմից մանկավարժական պրակտիկայի արդյունավետության և որակի գնահատման վերաբերյալ հարցաթերթիկների մշակում, հարցումների իրականացում և վերլուծություն,
5. ԳՊՄԻ-ում գրադարանից ուսանողների և պրոֆեսորադասախոսական կազմի բավարարվածության վերաբերյալ հարցաթերթիկների մշակում, հարցումների իրականացում և վերլուծություն,
6. Ուսանողական խորհրդատուների աշխատանքի արդյունավետության գնահատում ֆոկուս խմբերի միջոցով
7. Ուսանողներին անհատական և կուրսային աշխատանքի թեմաների տրամադրման վերաբերյալ հարցաթերթիկների մշակում, հարցումների իրականացում և վերլուծություն,

Հարցումների իրականացումը, արդյունքների վերլուծությունը, տարբեր ձևաչափերով հանդիպումները և քննարկումներն առավելագույնս նպաստում են որակի մշակույթի ձևավորմանը:

Որակի ներքին ապահովման կառույցները իրենց գործընթացների պատշաճ իրականացման համար ապահովված են անհրաժեշտ նյութատեխնիկական միջոցներով:

# IX. Ֆ Ի Ն Ա Ն Ս Ա Կ Ա Ն  Հ Ա Շ Վ Ե Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒ Ն /2014 թ./

2014թ-ի ընթացքում Գյումրու Մ.Նալբանդյանի անվան պետական մանկավարժական ինստիտուտի եկամուտներ և ծախսեր նախահաշվի մուտքերը կազմել են  975 315.5  հազ. դրամ, ինչը կազմում է տարեկան նախահաշվի 98.5%, իսկ ծախսերը՝ 845158.9 հազ. դրամ, ինչը կազմել է տարեկան նախահաշվի 91.9 %:

Հաշվետու տարում ԳՊՄԻ-ի եկամուտներ և ծախսեր նախահաշվի մուտքերի 96.52 % կամ 941329.2  հազ. դրամը ձևավորվել է գործառնական գործունեությունից ստացված եկամուտներից,  ինչը կազմում է տարեկան նախահաշվի նույն հոդվածի 98.89 %՝ եկամուտների 63.24 % ձևավորվել է վճարովի ուսուցման ծառայությունից ստացած ուսման վարձերից, ինչը կազմում է տարեկան նախահաշվի նույն հոդվածի 89.1 %, իսկ 36.76%՝ պետական բյուջեից ստացված ֆինանսավորումից, որը նախահաշվի նույն հոդվածով գերակատարվել է 21.8 %-ով:

Գործառնական այլ գործունեությունից եկամուտներիը, ներառյալ ԱԱՀ, կազմել են եկամուտներ և ծախսեր նախահաշվի մուտքերի 0.58 % կամ 5677.4 հազ. դրամ, ինչը կազմում է նախահաշվի նույն հոդվածի  70 %:

Ոչ գործառնական  գործունեությունից ստացված  եկամուտները, կազմել են եկամուտներ և ծախսեր նախահաշվի մուտքերի 2.9 % կամ 28308.9 հազ. դրամ, ինչը կազմում է նախահաշվի նույն հոդվածի  94.36 %:

Գործառնական գործունեությունից  վճարովի ուսուցման ծառայութան մուտքերի գերակշիռ մասը կազմում է բակալավրիատի հեռակա ուսուցման ծառայությունից ստացված եկամուտը՝ 302564.6 հազ.դրամ  կամ  50.82%: Բակալավրիատի առկա ուսուցման ծառայությունից ստաված եկամուտը կազմում է 208871.1 հազ.դրամ կամ 35.08%: Մագիստրատուրայի ուսուցման ծառայությունից ստաված եկամուտը կազմում է 78211.4  հազ.դրամ կամ 13.15 %: Ասպիրանտուրայի ուսուցման ծառայությունից

ստաված եկամուտը կազմում է 2754.7 հազ.դրամ կամ 0.46%: Միջին մասնագիտական կրթության բաժնի առկա և հեռակա ուսուցման ծառայությունից ստաված եկամուտը կազմում է 2 917.1 հազ.դրամ կամ 0.49 %:

Պետական բյուջեից ստացված ֆինանսավորումների 85.3% կամ 295 180.0 հազ.դրամը, կազմում են բարձրագույն մասնագիտական կրթության ծառայությունից ստացված մուտքերը, 0.75% կամ 2 606.6 հազ.դրամ հետբուհական մասնագիտական կրթության ծառայությունից ստացված մուտքերը, 5.81% կամ 20 123.0 հազ.դրամը՝ միջին մասնագիտական կրթության ծառայությունից ստացված մուտքերը և 8.1% կամ 28 100.7 հազ.դրամը հանրակրթական ուսուցման (Ավագ դպրոց) կրթության ծառայությունից ստացված մուտքերը:

Գործառնական այլ գործունեությունից, ներառյալ ԱԱՀ, ստացված մուտքերի 61.1% կամ 3472.3 հազ.դրամը, կազմում է առարկայական կրեդիտ պարտքերից ստացած եկամուտները, 35.2% կամ 2003.5 հազ.դրամը, կազմում է ընդունելության քննությունների կազմակերպման ծառայությունից և 3.5% կամ 201.6 հազ.դրամը՝ տարածքի վարձակալությունից:

Ոչ գործառնական գործունեությունից ստացված մուտքերից 73.76%, կամ 20 883.0 հազար դրամը, կազմում են դրամաշնորհային ծրագրերից ստացված եկամուտները և 26.4% կամ 7 425.3 հազ.դրամը՝ բանկում ավանդ ձևակերպված միջոցներից ստացված տոկոսներից եկամուտները:

Հաշվետու տարում բուհի եկամուտներ և ծախսեր նախահաշվի միջոցների հաշվին կատարվել են 845158.9 հազ. դրամի ծախսեր, որը կազմում է տարեկան նախահաշվի 91.9%: Նշված միջոցների 93.8% կամ 792 979.8 հազ.դրամ, ինչ կազմում է տարեկան նախահաշվի նույն հոդվածի 96.57%, ուղղվել է ընթացիկ և 6.2% կամ 52179.1 հազ.դրամը, որը կազմում է տարեկան նախահաշվի նույն հոդվածի 52.99%՝ ոչ ընթացիկ ծախսերի ֆինանսավորմանը:

Ընթացիկ ծախսերի 77.63% կամ 615639.2 հազ.դրամը, ինչը կազմում է տարեկան հաստատված նախահաշվի նույն հոդվածի 98.89%, ուղղվել է աշխատանքի վարձատրության և դրան հավասարեցված վճարումների ծախսերին: Այն մասնավորապես ծախսվել է հետևյալ կերպ.

1.Պրոֆեսորադասախոսական կազմ

2.Վարչական կազմ

3.ՌԻսումնաօժանդակ կազմ

4.Սպասարկող կազմ

5.Ժամավճարային հիմունքներով վճարվող կազմ

6.Գիտական և գիտատեխնիկական գործունեության կազմ

7.Դրամաշնորհային ծրագրեր

8. Պայմանագրային աշխատանքների կազմ

9.Խրախուսման և ֆինանսական աջակցության ծախս

Աշխատանքի վարձատրությանն ուղղվող միջոցների և դրան հավասարեցված վճարումների ծախսերում ներառված է

- որպես հարկային գործակալ, աշխատակիցներից պահված եկամտային հարկը՝ 25.06%
- որպես հարկային գործակալ, աշխատակիցներից պահված կամավոր և պարտադիր կուտակային վճարները՝ 1%

ԳՊՄԻ-ի մեկ ամսվա աշխատանքի միջին վարձատրությանն ուղղվող միջոցների և դրան հավասարեցված վճարների ծախսը կազմում է 51 637.9 հազ.դրամ, ամսական միջին աշխատավարձը հավասար է 138.8 հազ.դրամ, իսկ նվազագույն ամսական աշխատավարձը կազմում է 68.8 հազ.դրամ:

Կրթաթոշակի ծախսերը կազմել են ընթացիկ ծախսերի 3.5% կամ 28 067.2 հազ.դրամ, որը կազմում է տարեկան հաստատված նախահաշվի նույն հոդվածի 90%: Այն մասնավորապես ծախսվել է հետևյալ կերպ.

- Բարձրագույն մասնագիտական կրթություն ստացող ուսանողներին՝ 91.1%
- Միջին մասնագիտական կրթություն ստացող ուսանողներին՝ 8.9 %

Վճարումներ պետական բյուջե կազմել են ընթացիկ ծախսերի 5.57% կամ 44190.3 հազ.դրամ, որը գերակատարվել է 17.8 %:

Կոմունալ վճարների ծախսերը կազմել են ընթացիկ ծախսերի 2.8% կամ 21922.5 հազ.դրամ, որը գերակատարվել է 13.6 %:

Փոստի և կապի ծառայության ծախսերը կազմել են ընթացիկ ծախսերի 0.37% կամ 2 931.8 հազ.դրամ, որը գերակատարվել է 0.4 %:

Գրասենյակային ծախսերը կազմել են ընթացիկ ծախսերի 0.8 % կամ 6 349.5 հազ.դրամ, որը գերակատարվել է 15.4 %:

Ապրանքանյութական պաշարների ձեռք բերման ծախսերը կազմել են ընթացիկ ծախսերի 1.8 % կամ 14312.8 հազ.դրամ, որը կազմում է տարեկան հաստատված նախահաշվի նույն հոդվածի 61.82%:

Տրանսպորտային ծախսերը կազմում են ընթացիկ ծախսերի 0.99% կամ 7 905.8 հազ.դրամ, որը գերակատարվել է 2.6 %:

Ներկայացուցչական ծախսերը կազմել են ընթացիկ ծախսերի 0.78% կամ 6 204.2 հազ.դրամ, որը գերակատարվել է 106.8 %:

Գործուղման ծախսերը կազմել են ընթացիկ ծախսերի 1.2 % կամ 9 282.3 հազ.դրամ, որը կազմում է տարեկան հաստատված նախահաշվի նույն հոդվածի 68.75 %:

Ծառայությունների ձեռք բերման ծախսերը կազմել են ընթացիկ ծախսերի 1.2% կամ 9023.8 հազ.դրամ, որը կազմում է տարեկան հաստատված նախահաշվի նույն հոդվածի 33.23 %:

Տպագրական ծախսերը կազմել են ընթացիկ ծախսերի 1.13% կամ 9025.12 հազ.դրամ, որը կազմում է տարեկան հաստատված նախահաշվի նույն հոդվածի 94.0 %:

Վարձակալության ծախսերը կազմել են ընթացիկ ծախսերի 0.45 % կամ 3570.0 հազ.դրամ, որը գերակատարվել է 78.5 %:

Նպատակային ֆինանսավորման ծախսերը կազմել են ընթացիկ ծախսերի 0.86 % կամ 6 838.8 հազ.դրամ, որը գերակատարվել է 0.01 %:

Գրադարանային ծախսեր կազմել են ընթացիկ ծախսերի 0.23% կամ 1856.5 հազ.դրամ, որը կազմում է տարեկան հաստատված նախահաշվի նույն հոդվածի 74.26 %:

Այլ ծախսեր կազմել են ընթացիկ ծախսերի 0.73% կամ 5860.0 հազ.դրամ, որը կազմում է տարեկան հաստատված նախահաշվի նույն հոդվածի 78 %:

Ոչ ընթացիկ ակտիվների ձեռք բերման ծախսերը կազմել են ոչ ընթացիկ ծախսերի 19.89% կամ 10378.8 հազ.դրամ, որը կազմում է տարեկան հաստատված նախահաշվի նույն հոդվածի 30.5 %:

Հիմնանորոգման ծախսերը կազմել են ոչ ընթացիկ ծախսերի 80.11% կամ 41 800.3 հազ.դրամ, որը կազմում է տարեկան հաստատված նախահաշվի նույն հոդվածի 64.85 %:

| | ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՄՈՒՏՔԵՐԻ (ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ) ՀՈԴՎԱԾՆԵՐ | ՀՂՈՒՄ | Տարեկան հաստատված ցուցանիշ | Կատարողական | Մնացորդ |
|---|---|---|---|---|---|
| ԸՆԴԱՄԵՆԸ՝ | | | | | |
| 1. | Գործառնական գործունեությունից | | **989 850** | **975 315.5** | **14 534.5** |
| այդ թվում՝ | | | | | |
| 1.1. | Եկամուտներ վճարովի ուսուցման ծառայությունից | Հավելված 1 | 668 000 | 595 318.9 | 72 681.1 |
| 1.2. | Եկամուտներ պետական բյուջեից ստացվող | Հավելված 2 | 283 850 | 346 010.3 | /62 160.3/ |
| 2. | Գործառնական այլ եկամուտներ՝ ներառյալ ԱԱՀ | Հավելված 3 | 8 000 | 5 677.4 | 2 322.6 |
| 3. | Ոչ գործառնական եկամուտներ | Հավելված 4 | 30 000 | 28 308.9 | 1 691.1 |
| | ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԵԼՔԵՐԻ (ԾԱԽՍԵՐԻՆԵՐԻ) | | | | |
| 1. | Աշխատանքի վարձատրությանն ուղղված միջոցներ և դրան հավասարեցված | Հավելված 5 | 622 500 | 615 639.2 | 6 860.8 |
| 2. | Կրթաթոշակի ծախսեր | Հավելված 6 | 31 185 | 28 067.2 | 3 117.8 |
| 3. | Վճարումներ պետական բյուջե | Հավելված 7 | 37 500 | 44 190.3 | /6 690.3/ |
| 4. | Կոմունալ վճարումների ծախսեր | Հավելված 8 | 19 300 | 21 922.5 | /2 622.5/ |
| 5. | Փոստային և կապի վճարների ծախսեր | Հավելված 9 | 2 800 | 2 931.8 | /131.8/ |
| 6. | Գրասենյակային ծախսեր | Հավելված 10 | 5 500 | 6 349.5 | /849.5/ |
| 7. | Տպագրական ծախսեր | Հավելված 11 | 9 600 | 9 025.1 | 574.9 |
| 8. | Ապրանքանյութական պաշարների ծախսեր | Հավելված 12 | 23 150 | 14 312.8 | 8 837.2 |
| 9. | Տրանսպորտային ծախսեր | Հավելված 13 | 7 700 | 7 905.8 | /205.8/ |
| 10. | Ծառայությունների ձեռքբերման ծախսեր | Հավելված 14 | 27 150 | 9 023.8 | 18 126.2 |
| 11. | Ներկայացուցչական ծախսեր | | 3 000 | 6 204.2 | /3 204.2/ |
| 12. | Անդամավճարների ծախսեր | | 250 | | 250.0 |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| 13. | Վարձակալության ծախսեր | Հավելված 15 | 2 000 | 3 570.0 | /1 570.0/ |
| 14. | Գործուղման ծախսեր | Հավելված 16 | 13 500 | 9 282.3 | 4 217.7 |
| 15. | Նպատակային ֆինանսավորումների ծախսեր | Հավելված 17 | 6 000 | 6 838.8 | /838.8/ |
| 16. | Գրադարանային ծախսեր | Հավելված 18 | 2 500 | 1 856.5 | 643.5 |
| 17. | Այլ ծախսեր | Հավելված 19 | 7 500 | 5 860.0 | 1 640.0 |
| 18. | Ոչ ընթացիկ ակտիվների ձեռքբերման ծախսեր | Հավելված 20 | 34 000 | 10 378.8 | 23 621.2 |
| 19. | Հիմնանորոգման ծախսեր | Հավելված 21 | 64 455 | 41 800.3 | 22 654.7 |
| | Ընդամենը՝ | | **919 590** | **845 158.9** | **74 431.1** |

## ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԵՎ ԾԱԽՍԵՐԻ ՆԱԽԱՀԱՇՎԻ ԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ

Գումարը հազար դրամներով

| ՀԱՎԵԼՎԱԾ 1 | | Տարեկան հաստատված ցուցանիշ | Կատարողական | Մնացորդ |
|---|---|---|---|---|
| Հ/Հ | Դրամական միջոցների մուտքերի (եկամուտների) հոդվածներ | | | |
| 1.1 | Եկամուտներ վճարովի ուսուցման ծառայությունից | 668 000 | 595 318.9 | 72 681.1 |
| այդ թվում՝ | | | | |
| 1.1.1 | Բակալավրիատի առկա ուսուցման ծառայությունից | 250 000 | 208 871.1 | 41 128.9 |
| 1.1.2 | Մագիստրատուրայի ուսուցման ծառայությունից | 70 000 | 78 211.4 | /8 211.4/ |
| 1.1.3. | Ասպիրանտուրայի ուսուցման ծառայությունից | 3 000 | 2 754.7 | 245.3 |
| 1.1.4 | Բակալավրիատի հեռակա ուսուցման ծառայությունից | 350 000 | 302 564.6 | 47 435.4 |
| 1.1.5 | Միջին մասնագիտական կրթության ծառայությունից | 5 000 | 2 917.1 | 2 082.9 |

| | | | | |
|---|---|---|---|---|
| 1.1.6 | Հնարավոր կորուստների պահուստ /բակալավրատ, մագիստրատուրա, ասպիրանտուրա, հեռակա ուսուցում, միջին մասնագիտական կրթություն/ | /10 000/ | | /10 000/ |
| | | | | |

| ՀԱՎԵԼՎԱԾ 2 | | Տարեկան հաստատված ցուցանիշ | Կատարող ական | Մնացորդ |
|---|---|---|---|---|
| Հ/Հ | Դրամական միջոցների մուտքերի (եկամուտների) հոդվածներ | | | |
| 1.2 | Եկամուտներ պետական բյուջեից ստացվող ֆինանսավորումից | 283 850 | 346 010.3 | /62 160.3/ |
| այդ թվում՝ | | | | |
| 1.2.1 | Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության ծառայությունից | 240 850 | 297 786.6 | /56 936.6/ |
| այդ թվում՝ | | | | |
| 1.2.1.1 | Բարձրագույն կրթության ծառայությունից | 240 500 | 295 180 | /54 680.0/ |
| 1.2.1.2. | Հետբուհական կրթության ծառայությունից | 350 | 2 606.6 | /2 256.6/ |
| 1.2.2. | Միջին մասնագիտական կրթության ծառայությունից | 17 000 | 20 123 | /3 123.0/ |
| 1.2.3. | Ավագ դպրոցի կրթության ծառայությունից | 26 000 | 28 100.7 | /2 100.7/ |

| ՀԱՎԵԼՎԱԾ 3 | | Տարեկան հաստատված ցուցանիշ | Կատարող ական | Մնացորդ |
|---|---|---|---|---|
| Հ/Հ | Դրամական միջոցների մուտքերի (եկամուտների) հոդվածներ | | | |
| 2 | Գործառնական այլ եկամուտներից՝ ներառյալ ԱԱՀ | 8 000 | 5 677.4 | 2 322.6 |

| | | | | |
|---|---|---|---|---|
| այդ թվում՝ | | | | |
| 2.1 | Եկամուտներ ուսումնաարտադրական բազաների ծառայություններից | 0 | | |
| 2.2 | Եկամուտներ լրացուցիչ դասընթացների կազմակերպումից /կրեդիտ պարտքեր/ | 6 000 | 3 472.3 | 2 527.7 |
| 2.2 | Եկամուտներ ընդունելության քննություններ կազմակերպումից | 2 000 | 2 003.5 | / 3.5/ |
| 2.3 | Այլ եկամուտներից՝ | 0 | 201.6 | / 201.6/ |
| 2.4 | Հիմական միջոցների և ապրանքանյութական պաշարների օտարումից | 0 | | |
| ՀԱՎԵԼՎԱԾ 4 | | Տարեկան հաստատված ցուցանիշ | Կատարող ական | Մնացորդ |
| Հ/Հ | Դրամական միջոցների մուտքերի (եկամուտների) հոդվածներ | | | |
| 3. | Ոչ գործառնական եկամուտներից | 30 000 | 28 308.9 | 1 691.1 |
| այդ թվում՝ | | | | |
| 3.1 | Դրամաշնորհային ծրագրերից | 30 000 | 20 883.0 | 9 117.0 |
| 3.2 | Եկամուտներ բանկում ավանդ ձևակերպված միջոցներից ստացվող տոկոսներից | 0 | 7 425.9 | /7 425.9/ |
| 3.3 | Բարեգործական եկամուտներից | 0 | | |
| ՀԱՎԵԼՎԱԾ 5 | | Տարեկան հաստատված ցուցանիշ | Կատարող ական | Մնացորդ |
| Հ/Հ | ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԵԼՔԵՐԻ (ԾԱԽՍԵՐԻՆԵՐԻ) ՀՈԴՎԱԾՆԵՐ | | | |

| | | | | |
|---|---|---|---|---|
| 1. | Աշխատանքի վարձատրությանն ուղղված միջոցներ և դրան հավասարեցված վճարումների ծախսեր | 622 500 | 615 639.2 | 6 860.8 |
| այդ թվում՝ | | | | |
| 1.1 | Պրոֆեսորադասախոսական անձնակազմի ծախսեր /ներառյալ 20%աշխատավարձի բարձրացում/ | 360.000 | 344 320 | 15 680 |
| 1.2 | Տարբերակված հավելավճարներ պրոֆեսորադասախոսական անձնակազմին | 5 000 | 1 500 | 3 500 |
| 1.3 | Ժամավճարային հիմունքով աշխատավարձ պրոֆեսորադասախոսական անձնակազմին | 13 000 | 3 038.3 | 9 961.7 |
| 1.4 | Վարչական անձնակազմի ծախսեր | 100 000 | 99 750.0 | 250 |
| 1.5 | Ուսումնաօժանդակ անձնակազմի ծախսեր | 24 000 | 33 360.1 | /9 360.1/ |
| 1.6 | Սպասարկող և այլ անձնակազմի ծախսեր | 53 000 | 56 040.1 | /3 040.1/ |
| 1.7 | Դրամաշնորհային ծրագրերով անձնակազմի աշխատավարձի ծախսեր | 3 000 | 13 724.4 | /10 724.4/ |
| 1.8 | Լրացուցիչ կրթական դասընթացների կազմակերպման համար պրոֆեսորադասախոսական անձնակազմին | 2 000 | 1 736.1 | 263.9 |
| 1.9 | Պայմանագրային /միանվագ/ աշխատանքների վարձատրության ծախսեր | 2 500 | 5 889.2 | 3 389.2 |
| 1.10 | Խրախուսման և ֆինանսական աջակցության ծախսեր | 55 000 | 53 229.2 | 1 770.8 |
| 1.11 | Պրոֆեսորադասախոսական անձնակազմին արդյունավետ աշխատանքի համար հավելավճար | 5 000 | 3 051.8 | 1 948.2 |
| Աշխատանքի վարձատրությանն ուղղված միջոցների և դրան հավասարեցված վճարումների | | | | |
| ա) | Որպես հարկային գործակալ ֆիզիկական անձանցից պահվող եկամտային հարկի վճարումներ պետական բյուջե | 158 110 | 154 284.0 | 3 826.0 |

| ՀԱՎԵԼՎԱԾ 6 | | Տարեկան հաստատված ցուցանիշ | Կատարողական | Մնացորդ |
|---|---|---|---|---|
| Հ/Հ | ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԵԼՔԵՐԻ (ԾԱԽՍԵՐԻՆԵՐԻ) ՀՈԴՎԱԾՆԵՐ | | | |
| 2. | Կրթաթոշակների ծախսեր | 31 185 | 28 067.2 | 3 117.8 |
| այդ թվում՝ | | | | |
| 2.1 | Կրթաթոշակ՝ բակալավրիատի ուսանողներին | 18 200 | 17 007.2 | 1 192.8 |
| 2.2 | Կրթաթոշակ՝ մագիստրատուրայի ուսանողներին | 8 565 | 7 675.8 | 889.2 |
| 2.3 | Կրթաթոշակ՝ միջին մասնագիտական կրթության բաժնի ուսանողներին | 3 400 | 2 484.2 | 915.8 |
| 2.4 | Անվանական կրթաթոշակ | 720 | 600.0 | 120.0 |
| 2.5 | Կրթաթոշակ՝ ասպիրանտներին | 300 | 300.0 | |

| ՀԱՎԵԼՎԱԾ 7 | | Տարեկան հաստատված | Կատարողական | Մնացորդ |
|---|---|---|---|---|
| Հ/Հ | ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԵԼՔԵՐԻ (ԾԱԽՍԵՐԻՆԵՐԻ) ՀՈԴՎԱԾՆԵՐ | | | |
| 3. | Վճարումներ պետական բյուջե | 37 500 | 44 190.3 | /6 690.3/ |
| այդ թվում՝ | | | | |
| 3.1 | Հարկեր, տուրքեր և պարտադիր վճարներ | 37 500 | 44 190.3 | /6 690.3/ |
| այդ թվում՝ | | | | |
| 3.1.1 | Շահութահարկ | 32 000 | 42 000 | /10 000/ |
| 3.1.2 | ԱԱՀ | 2 500 | 946.3 | 1 553.7 |
| 3.1.3 | Այլ հարկեր, տուրքեր և պարտադիր վճարներ | 3 000 | 1 244.0 | 1 756.0 |

| | | | | |
|---|---|---|---|---|
| 3.2 | Բյուջե փոխանցվող տարածքի վարձավճարներ | 0 | | |
| ՀԱՎԵԼՎԱԾ 8 | | Տարեկան հաստատված ցուցանիշ | Կատարող ական | Մնացորդ |
| Հ/Հ | ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԵԼՔԵՐԻ (ԾԱԽՍԵՐԻՆԵՐԻ) ՀՈԴՎԱԾՆԵՐ | | | |
| 4. | Կոմունալ վճարների ծախսեր | 19 300 | 21 922.5 | /2 622.5/ |
| այդ թվում՝ | | | | |
| 4.1 | Էլեկտրաէներգիայի ծախսեր | 6 300 | 7 228.0 | /928.0/ |
| 4.2 | Գազի ծախսեր | 11 000 | 12 976.4 | /1 976.4/ |
| 4.3 | Ջրամատակարարման և ջրահեռացման ծախսեր | 1 200 | 998.1 | 201.9 |
| 4.4 | Կումունալ այլ վճարների ծախսեր | 800 | 720.0 | 80.0 |
| ՀԱՎԵԼՎԱԾ 9 | | Տարեկան հաստատված ցուցանիշ | Կատարող ական | Մնացորդ |
| Հ/Հ | ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԵԼՔԵՐԻ (ԾԱԽՍԵՐԻՆԵՐԻ) ՀՈԴՎԱԾՆԵՐ | | | |
| 5. | Փոստի և կապի վճարների ծախսեր | 2 800 | 2 931.8 | /131.8/ |
| այդ թվում՝ | | | | |
| 5.1 | Հեռախոսակապի ծախսեր | 2 000 | 2 056.8 | /56.8/ |
| 5.2 | Ինտերնետ կապի ծախսեր | 600 | 490.5 | 109.5 |
| 5.3 | Փոստային ծախսեր | 200 | 384.5 | /184.5/ |
| ՀԱՎԵԼՎԱԾ 10 | | Տարեկան հաստատված ցուցանիշ | Կատարող ական | Մնացորդ |

| | | | | |
|---|---|---|---|---|
| Հ/Հ | ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԵԼՔԵՐԻ (ԾԱԽՍԵՐԻՆԵՐԻ) ՀՈԴՎԱԾՆԵՐ | | | |
| 6. | Գրասենյակային ծախսեր | 5 500 | 6 349.5 | /849.5/ |
| այդ թվում՝ | | | | |
| 6.1 | Գրենական պիտույքների ծախսեր | 4 500 | 5 028.5 | /528.5/ |
| 6.2 | Քարտրիջներ և դրանց լիցքավորման ծախսեր | 1 000 | 1 321.0 | /321.0/ |
| ՀԱՎԵԼՎԱԾ 11 | | Տարեկան հաստատված ցուցանիշ | Կատարող ական | Մնացորդ |
| Հ/Հ | ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԵԼՔԵՐԻ (ԾԱԽՍԵՐԻՆԵՐԻ) ՀՈԴՎԱԾՆԵՐ | | | |
| 7. | Տպագրական ծախսեր | 9 600 | 9 025.1 | 574.9 |
| այդ թվում՝ | | | | |
| 7.1 | դասամատյաններ | 300 | 152.5 | 147.5 |
| 7.2 | Ստուգման գրքույկներ, ուսանողական տոմսեր | 500 | 568.0 | /68.0/ |
| 7.3 | Դիպլներ ներդիրով | 3 600 | 3 423.4 | 176.6 |
| 7.4 | Պետական քննությունների արձանագրությունների մատյաններ և տոմսեր | 200 | 55.2 | 144.8 |
| 7.5 | Մանկավարժական, ուսումնական պրակտիկայի օրագրեր | 500 | 478.7 | 21.3 |
| 7.6 | ՈՒԳՀ նյութերի ժողովածուի տպագրություն | 500 | 465.0 | 35.0 |
| 7.7 | ԳՊՄԻ պարբերականի տպագրություն /4 հատոր/ | 2 000 | 600.0 | 1 400.0 |
| 7.8 | ԳՊՄԻ լրագիր /ամենամսյա/ թերթի մակետավորում տպագրություն | 500 | 808.3 | /308.3/ |
| 7.9 | ԳՊՄԻ գիտական նյութերի ժողովածու | 500 | | 500.0 |
| 7.10 | ԳՊՄԻ 80-ամյակի նվիրված ժողովածու և բուկլետներ,հրավերքներ | 1 000 | 2 474.0 | /1 474.0/ |

| ՀԱՎԵԼՎԱԾ 12 | | Տարեկան հաստատված ցուցանիշ | Կատարող ական | Մնացորդ |
|---|---|---|---|---|
| Հ/Հ | ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԵԼՔԵՐԻ (ԾԱԽՍԵՐԻՆԵՐԻ) ՀՈԴՎԱԾՆԵՐ | | | |
| 8. | Ապրանքանյութական պաշարների ծախսեր | 23 150 | 14 312.8 | 8 837.2 |
| այդ թվում՝ | | | | |
| 8.1 | Շինանյութեր | 12 500 | 10 895.5 | 1 604.5 |
| 8.2 | Տնտեսական ապրանքներ | 2 000 | 1 506.0 | 494.0 |
| 8.3 | Սննդային ապրանքներ | 3 000 | | 3 000.0 |
| 8.4 | Համակարգչային պարագաներ | 800 | 244.2 | 555.8 |
| 8.5 | Լամպեր և լուսարձակներ | 500 | 173.0 | 327.0 |
| 8.6 | Քիմիական և լաբորատոր նյութեր | 300 | 48.8 | 251.2 |
| 8.7 | Մարզական գույք | 2 000 | | 2 000.0 |
| 8.8 | Դեղորայք | 50 | 73.8 | /23.8/ |
| 8.9 | Գործիքներ | 1 000 | 585.0 | 415.0 |
| 8.10 | Ապրանքանյութական այլ պաշարներ | 1 000 | 786.5 | 213.5 |

| ՀԱՎԵԼՎԱԾ 13 | | Տարեկան հաստատված | Կատարող ական | Մնացորդ |
|---|---|---|---|---|
| Հ/Հ | ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԵԼՔԵՐԻ (ԾԱԽՍԵՐԻՆԵՐԻ) ՀՈԴՎԱԾՆԵՐ | | | |
| 9. | Տրանսպորտային ծախսեր | 7 700 | 7 905.8 | /205.8/ |
| այդ թվում՝ | | | | |
| 9.1 | Վառելիքի և քսայուղի ծախսեր | 5 000 | 5 750.5 | /750.5/ |
| 9.2 | Ավտոսպասարկման և ավտոպահեստամասերի ծախսեր | 2 500 | 2 045.3 | 454.7 |
| 9.3 | Տրանսպորտային միջոցների վարձակալության ծախսեր | 200 | 110.0 | 90.0 |

| ՀԱՎԵԼՎԱԾ 14 | | Տարեկան հաստատված ցուցանիշ | Կատարողական | Մնացորդ |
|---|---|---|---|---|
| Հ/Հ | ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԵԼՔԵՐԻ (ԾԱԽՍԵՐԻՆԵՐԻ) ՀՈԴՎԱԾՆԵՐ | | | |
| 10. | Ծառայությունների ձեռքբերման ծախսեր | 27 150 | 9 023.8 | 18 126.2 |
| այդ թվում` | | | | |
| 10.1 | Գույքի նորոգման և սպասարկման ծառայություններ | 500 | | 500 |
| 10.2 | Ցուցանակների պատրաստման ծառայություններ | 1 000 | 833.3 | 166.7 |
| 10.3 | Գովազդային ծառայություններ | 2 000 | 1 384.3 | 615.7 |
| 10.4 | ԳՊՄԻ հավատարմագրման վճար | 10 000 | | 10 000.0 |
| 10.5 | Փաստաթղթերի արխիվացման ծառայություններ | 200 | | 200.0 |
| 10.6 | Ասպիրանտուրայի դիմորդների և պրոֆեսորադասախոսական անձնակազմի համար անգլերեն լեզվի դասընթացների ծառայություն | 300 | 496.3 | /196.3/ |
| 10.7 | Աուդիտորական և խորհրդատվական ծառայություններ | 5 000 | | 5 000.0 |
| 10.8 | Ապահովագրական ծառայություններ | 150 | | 150.0 |
| 10.9 | Մանկավարժական, արտադրական և ուսումնական պրակտիկայի կազմակերպման ծառայություններ մասնագիտական կազմակերպություններում, ընկերություններում | 4 000 | 2 059.9 | 1 940.1 |
| 10.10 | Մոնիթորինգի ծառայություններ /նախատեսված է դրամաշնորհային ծրագրերով/ | 2 000 | | 2 000.0 |
| 10.11 | Այլ ծառայություններ | 2 000 | 4 250.0 | /2 250.0/ |

| ՀԱՎԵԼՎԱԾ 15 | | Տարեկան հաստատված ցուցանիշ | Կատարողական | Մնացորդ |
|---|---|---|---|---|
| Հ/Հ | ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԵԼՔԵՐԻ (ԾԱԽՍԵՐԻՆԵՐԻ) ՀՈԴՎԱԾՆԵՐ | | | |
| 11. | Վարձակալության ծախսեր | 2 000 | 3 570.0 | /1 570.0/ |

| | | | | |
|---|---|---|---|---|
| այդ թվում՝ | | | | |
| 11.1 | Մարզասրահների վարձակալության ծախսեր | | | |
| 11.2 | Բնակարանների վարձակալության ծախսեր | 500 | | 500.0 |
| 11.3 | Սրահների վարձակալության ծախսեր | 500 | 120.0 | 380.0 |
| 11.4 | Տեխնիկայի, լուսարձակների, բեմական պարագաների և այլ գույքի վարձակալության ծախսեր | 1 000 | 3 450.0 | /2 450.0/ |
| ՀԱՎԵԼՎԱԾ 16 | | Տարեկան հաստատված ցուցանիշ | Կատարողական | Մնացորդ |
| Հ/Հ | ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԵԼՔԵՐԻ (ԾԱԽՍԵՐԻՆԵՐԻ) ՀՈԴՎԱԾՆԵՐ | | | |
| 12. | Գործուղման ծախսեր | 13 500 | 9 282.3 | 4 217.7 |
| այդ թվում՝ | | | | |
| 12.1 | Պրոֆեսորադասախոսական անձնակազմի գործուղման ծախսեր | 2 000 | 2 100.0 | /100.0/ |
| 12.2 | Վարչական և այլ անձնակազմի գործուղման ծախսեր | 2 500 | 1 978.0 | 522.0 |
| 12.3 | Ուսանողական գործուղումների ծախսեր | 1 000 | 1 144.0 | /144.0/ |
| 12.4 | Միջազգային, հանրապետական օլիմպիադաների և գիտաժողովների մասնակցության գործուղման ծախսեր | 1 000 | 800.0 | 200.0 |
| 12.5 | Դաշտային պրակտիկայի գործուղման ծախսեր | | | |
| 12.6 | Գիտական գործունեության համար նախատեսված գործուղման ծախսեր | 2 000 | 1 774.3 | 225.7 |
| 12.7 | Դրամաշնորհային ծրագրերով նախատեսված գործուղման ծախսեր | 5 000 | 1 486.0 | 3 514.0 |
| ՀԱՎԵԼՎԱԾ 17 | | Տարեկան հաստատված ցուցանիշ | Կատարողական | Մնացորդ |

| | | | | |
|---|---|---|---|---|
| Հ/Հ | ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԵԼՔԵՐԻ (ԾԱԽՍԵՐԻՆԵՐԻ) ՀՈԴՎԱԾՆԵՐ | | | |
| 13. | Նպատակային ֆինանսավորումների ծախսեր՝ գործընկեր կազմակերպություններին | 6 000 | 6 838.8 | /838.8/ |
| այդ թվում՝ | | | | |
| 13.1 | Գիտական և գիտատեխնիկական գործունեության ծրագրի մասով | 3 000 | | 3 000.0 |
| 13.2 | Դրամաշնորհային ծրագրերի մասով | 3 000 | 6 838.8 | /3 838.8/ |
| ՀԱՎԵԼՎԱԾ 18 | | Տարեկան հաստատված ցուցանիշ | Կատարող ական | Մնացորդ |
| Հ/Հ | ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԵԼՔԵՐԻ (ԾԱԽՍԵՐԻՆԵՐԻ) ՀՈԴՎԱԾՆԵՐ | | | |
| 14. | Գրադարանային ծախսեր | 2 500 | 1 856.5 | 643.5 |
| այդ թվում՝ | | | | |
| 14.1 | Թերթերի և ամսագրերի բաժանորդագրության ծախսեր | 500 | 138.5 | 361.5 |
| 14.2 | Էլեկտրոնային ռեսուրսների բաժանորդագրության ծախսեր | 500 | | 500.0 |
| 14.3 | Գրքերի ձեռքբերման ծախսեր | 1 500 | 1 718.0 | /218.0/ |

| | | | | |
|---|---|---|---|---|
| ՀԱՎԵԼՎԱԾ 19 | | Տարեկան հաստատված ցուցանիշ | Կատարող ական | Մնացորդ |
| Հ/Հ | ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԵԼՔԵՐԻ (ԾԱԽՍԵՐԻՆԵՐԻ) ՀՈԴՎԱԾՆԵՐ | | | |
| 15. | Այլ ծախսեր | 7 500 | 5 860.0 | 1 640.0 |
| այդ թվում՝ | | | | |
| 15.1 | Համագործակցության ծախսեր՝ Հայաստանի Երիտասարդական Հիմնադրամի և Հայաստան | 2 000 | 2 400.0 | /400.0/ |

| | | | | |
|---|---|---|---|---|
| 15.2 | Բարեգործական ծախսեր | 4 500 | 2 660.0 | 1 840.0 |
| 15.3 | Մշակութային միջոցառումների տոմսերի ձեռքբերման ծախսեր | 1 000 | 800.0 | 200.0 |
| ՀԱՎԵԼՎԱԾ 20 | | Տարեկան հաստատված ցուցանիշ | Կատարող ական | Մնացորդ |
| Հ/Հ | ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԵԼՔԵՐԻ (ԾԱԽՍԵՐԻՆԵՐԻ) ՀՈԴՎԱԾՆԵՐ | | | |
| 16. | Ոչ ընթացիկ ակտիվների ձեռքբերման ծախսեր | 34 000 | 10 378.8 | 23 621.2 |
| այդ թվում՝ | | | | |
| 16.1 | Համակարգչային գույք | 4 000 | | 4 000.0 |
| 16.2 | Կահույք | 5 000 | 4 721.0 | 279.0 |
| 16.3 | Տրանսպորտային միջոց | 15 000 | | 15 000.0 |
| 16.4 | Հակահրդեհային գույք | | | |
| 16.5 | Ոչ ընթացիկ այլ ակտիվներ | 10 000 | 5 657.8 | 4 342.2 |
| ՀԱՎԵԼՎԱԾ 21 | | Տարեկան հաստատված ցուցանիշ | Կատարող ական | Մնացորդ |
| Հ/Հ | ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԵԼՔԵՐԻ (ԾԱԽՍԵՐԻՆԵՐԻ) ՀՈԴՎԱԾՆԵՐ | | | |
| 17. | Հիմնանորոգման ծախսեր | 64 455 | 41 800.3 | 22 654.7 |
| այդ թվում՝ | | | | |
| 17.1 | Վերանորոգում /6 լսարան/ | 1 800 | | 1 800.0 |
| 17.2 | Ջեռուցման համակարգի վերանորոգում՝ֆանկոյլտետներ | 15 200 | | 15 200.0 |
| 17.3 | Մանրահատակի վերանորոգում | 200 | | 200.0 |
| 17.4 | Կտուրի վերանորոգում | 1 350 | | 1 350.0 |
| 17.5 | Միջնապատ /պերեգարոդկա/ | 300 | | 300.0 |
| 17.6 | Մարզադահլիճի ապակիների փոփոխում | 100 | | 100.0 |

| | | | | |
|---|---|---|---|---|
| 17.7 | Նոր  դռների տեղադրում | 1 500 | | 1 500.0 |
| 17.8 | Հատակի լամինապատում | 1 000 | | 1 000.0 |
| 17.9 | Մուտքի և նախամուտքի խեցե /կերամիկայի/ սալիկապատում | 2 400 | | 2 400.0 |
| 17.10 | Ճեմուղիների սալիկապատում | 600 | | 600.0 |
| 17.11 | Միջանցքի հիմնանորոգում | 40 000 | 41 800.3 | /1800.7/ |